# ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ*

## 1915 ՀՈՒԼԻՍ

*1 հուլիսի*

• Դիարբեքիրի նահանգի Մարդին քաղաքում սկսվում են հայերի և ասորիների կոտորածները: Թե ինչպես էր այդ քաղաքում հայերին կոտորում Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդ բեյը՝ վկայում է Մոսուլում Գերմանիայի հյուպատոս Հոլշտայնը: Նա ըստ Մարդինի գավառապետի հետ ունեցած զրույցի վկայում է. «Ռաշիդ բեյը կատաղած ու արյունարբու շան նման մոլեգնում էր նահանգի քրիստոնյաների դեմ: Քիչ առաջ քաղաքի 700 քրիստոնյաների (հիմնականում հայեր), որոնց մեջ նրանց եպիսկոպոսը, մի գիշերվա ընթացքում Դիարբեքիրից այստեղ բերված ոստիկանների միջոցով հավաքել և քաղաքի մոտ ոչխարների նման մորթոտել է: Ապա նա շարունակեց իր արյունալի գործը 2000-ից ավելի անմեղների դեմ»:[1]

• Տարագրություններն ու ջարդերը սկսվում են Էրզրումի նահանգի Բայազետ քաղաքում, երբ թուրք ոստիկանները շրջապատելով Բայազետը ձերբակալում են տղամարդկանց և քաղաքից դուրս տանելով՝ խումբ-խումբ գնդակահարում, իսկ կանանց ու երեխաներին տարագրում:[2]

• Կոտորածներ են սկսվում նաև Դիարբեքիրի նահանգի Մարդինի գավառի Թել-Էրմենի և Նիսիպի (Մծբին) գյուղերում: Թել-Էրմենիում 2000 քուրդ հեծյալներ երկու ժամվա ընթացքում կոտորում են նախօրոք թուրք զինվորների ցուցումով եկեղեցում հավաքված 800 կաթոլիկ հայերի: Դեպքերին ականատես մայրը Միկուշն այդ մասին պատմել է Հալեպի գերմանական հյուպատոսին՝ նշելով, որ քրդերը Թել-Էրմենի և մոտակա գյուղի բոլոր հայերին կոտորելուց հետո քանդել են նաև նրանց եկեղեցիները: 200 դիակ անձամբ Միկուշն է տեսել: Նա նշել է նաև, որ զինվորներն ու ոստիկանությունը ևս մասնակցել են կոտորածին:[3]

• Նախօրոք կատարված հայտարարության համաձայն տարագրությունները սկսվում են Խարբերդում: Եվ ինչպես

---

* Սկիզբը՝ հանդեսի նախորդ (10-11, 12) համարներում:

գրում է տեղի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսն իր հյուպատոսական հաշվետվության մեջ «...Հուլիսյան այդ շոգ օրը առնվազն երեք հազար հոգի դուրս եկան Մամուրեթ-ուլ-Ազիզից (Խարբերդ): Ոմանք եզան սայլերով, ջորիներով ու ավանակներով էին, ոմանք էլ ունեցվածքը բեռցրել էին կովերին, բայց հիմնական մասը ստիպված եղավ գնալ ոտքով՝ իրերը շալակել, երեխաներին գրկել, երեխաներին գրկել ու անապատի կիզիչ ավազի վրայով տաժանակիր ճամփորդություն կատարել: Սակայն ջորիներն ու ավանակները, որ կառավարությունն էր տրամադրել քիչ ժամանակ անց հետ վերադարձան, այնպես որ պարզ դարձավ, թե ինչ է սպասում բռնագաղթվողներին...»:[4]

• Տեղահանություններ ու ջարդեր են սկսվում Տրապիզոնում: Ինչպես դեսպան Մորգենթաուին գրում է տեղի ամերիկյան հյուպատոս Օսկար Հեյզերն իր հուլիսի 28-ի տեղեկագրում, ժանդարմները հայերին դուրս հանելով իրենց տներից և կազմելով 2000 հոգանոց մի խումբ, քշում էին Գյումուշխանեի ուղղությամբ. «Այս մարդկանցից շատերը մեծահարուստներ էին: Հունիսի 25-ի տեղահանության հրահանգից հետո հայերին արգելվեց իրենց ունեցվածքը վաճառել և ով փորձեր նրանցից որևէ բան գնել՝ ենթակա էր պատժի: ... Մարդիկ ճանապարհի էին ընկնում դատարկ գրպաններով և շատ շուտով հյուծվում ու խմբից հետ էին ընկնում, որոնց հաճախ սպանում և գցում էին գետը: Ականատեսները պատմում են, որ դեպքերից 15 օր հետո տեսել են, թե ինչպես դիակները հավաքվել և կպել էին գետափնյա ծառաբներին, որտեղից գարշահոտ էր փչում...»:[5]

• Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնյա և կովկասյան բանակի շտաբի թարգմանիչ Մաքսիմովը օգոստոսի 2-ին կովկասյան բանակի առաջին կորպուսի հրամանատարին զեկուցում է, որ գաբահիսարյան գնդի գլխավոր բժիշկ հույն կապիտան Դմիտրի Բալուկիսի Տրապիզոնից կատարած հաղորդագրության համաձայն. «...թուրքական կառավարությունը հայերին դիմեց Թուրքիան հինգ օրվա ընթացքում լքելու պահանջով: Իրոք, վեցերորդ օրը բոլոր հայերը բռնի հավաքվեցին քաղաքից դուրս և այնտեղից ժանդարմների ուղեկցությամբ ուղարկվեցին երկրի խորքերը: Ասում են, որ տղամարդիկ Գյումուշխանեից այն կողմ չհասան, քանի որ այնտեղ էր գտնվում մի ավազակախումբ, որը ոչնչացրեց նրանց, իսկ կանանց և երեխաներին ուղարկեցին Երզնկա և այնտեղ գցեցին Եփրատի մեջ...»:[6]

• Օսմանյան չորրորդ բանակի հրամանատար Ջեմալը հեռագրում է Դիարբեքիրի կուսակալ Ռաշիդին, թե Եփրատի բերած դիակները պետք է հավաքել և տեղերում թաղել:[7]

• Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին, արտաքին գործերի նախարար Բուրիանին գրում է, որ «Սև ծովի ավազանի շրջաններից հայ ընտանիքները դեպի երկրի խորքերն արտաքսելու ժամանակ ավելորդ դաժանությունից խուսափելու» մտահոգությամբ ինքը հանդիպել և այդ մասին զրուցել է Մեծ Վեզիրի հետ՝ շեշտելով, որ «...եթե որոշ հայեր հակապետական ննկրտումներ ունեն կամ կասկածելի են, ապա դա չպիտի վերաբերվեր բոլորին, և կանանց ու երեխաներին դեպի Մոսուլի շրջան կարճ ժամանակամիջոցում աքսորելը հազիվ թե արդարացի քվա: Իսկ այդ միջոցառման իրականացման եղանակն ու առկա ծանր կացությունը գրեթե հավասար է մահվան դատավճռի...»:[8]

• Մուշի գերմանական որբանոցի քույր Ալմա Յոհանսոնը Կոստանդնուպոլսի իրենց գլխավոր հյուպատոս Մորդմանին նոյեմբերի 20-ին գրած

իր հաղորդագրության մեջ հայտնում է, որ «...հուլիսի 1-ին 2000 հայ զինվորների, որոնց պետք է տանեին Հալեպ՝ ճանապարհներ կառուցելու համար, դաժանաբար սպանեցին Մուշից մի քանի ժամ հեռավորության վրա գտնվող կիրճերում: Նրանցից միայն մի քանիսին հաջողվեց մթության մեջ փախչել և փրկվել...»:[9]

*2 հուլիսի*

• Սկսվում են ջարդերը Անգորայի նահանգի Յոզղատ քաղաքի շրջակա գյուղերում:[10]

• Մուշի գերմանական որբանոցի քույր Ալմա Յոհանսոնը Պոլսում Գերմանիայի գլխավոր հյուպատոս Մորդմանին գրում է, որ հուլիսի 2-ին «...նորից 2000 հայեր ուղարկվեցին Դիարբեքիրի ուղղությամբ, որոնց մեջ էին նաև մեր որբ-երիտասարդներից շատերը: Այս խմբից նույնպես մի քանիսին հաջողվեց փրկվել՝ չնայած նրանց տարել են իրար կապված վիճակում: Եվ տեսնելով, որ ոմանք կարողանում են փախչել՝ դրանից հետո ժողովրդին ուժասպառ անելու համար, երեք օր նրանց առանց հացի ու ջրի էին պահում»:[11]

• Տրապիզոնի գերմանական հյուպատոս Բերգֆելդը դեսպան Վանգենհայմին գրում է, որ Էրզրումից Երզնկայով իրենց մոտ հասած մի ենթասպա պատմել է, որ «...Մամախաթունի և Երզնկայի միջև նա հանդիպել է մոտ 400 ուժեղ տղամարդկանցից բաղկացած ավազակախմբի, որոնք սպասում էին Էրզրումից եկող հայերին: Նրանց առաջնորդները ֆրանսերեն էին խոսում... (երիտթուրքական կոմիտեի անդամներ էին): Երզնկայի և Սպիկորի միջև ենթասպան հանդիպել էր հայ կանանց, որոնք սովածությունից խոտ էին ուտում: Բացի այդ նա հավաստի աղբյուրներից իմացել էր, որ Երզնկայից տեղահանված հայերին մոտակա լեռներում սպանել են զինվորականները»:[12]

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմի արտաքին գործերի նախարարությանն ուղարկած ծածկագիր հեռագրում ասվում է. «Դոկտոր Լեփսիուսի հաղորդած տեղեկությունները հայկական հարցի վերաբերյալ ստիպում են զգուշանալ, որ նրա այցելությունն այստեղ, այս պահին կարող է մեզ համար մեծ անախորժություններ ստեղծել, և հատկապես հայերի ծանր վիճակի հետ նրա ծանոթանալուց հետո կարող է վնասել մեր հետագա ավելի կարևոր շահերին... Ես կասկածում եմ, որ նրան կհաջողվի հանգստացնել տեղացի հայերին, քանի որ թուրքական կառավարությունը հաստատ որոշել է ավարտել այդ միջոցառումները (զանգվածային տեղահանություններ, կոտորածներ) և վերջերս է՛լ ավելի է սաստկացրել դրանք: Ուստի Դուք կարող եք փորձել լրջորեն համոզել դոկտոր Լեփսիուսին՝ չիրականացնելու այդ այցը»:[13]

• Սկսվում է Խարբերդի մոտակա Մեզիրե քաղաքի տեղահանությունը և ավարտվում հաջորդ երկու օրերի ընթացքում:[14]

*3 հուլիսի*

• Տիգրանակերտի կուսակալ Ռեշիդ բեյն «անձամբ» մակագրված ծածկագիր մի հեռագրով հաղորդում է թուրքական IV բանակի հրամանատար Ջեմալին, որ Եփրատի բերած դիակները հավանաբար Կարինի և Խարբերդի կողմերից են հասել, իսկ Տիգրանակերտում «ապստամբական շարժման ժամանակ սպանվածներին» ընդհանրապես լցրել էին խոր փոսերի մեջ, կամ էլ՝ այրել:[15]

• Եգիպտոսի հայկական համայնքը մի նամակ-տեղեկագիր է ուղարկում Եգիպտոսում բրիտանական ուժերի հրամանատար Մաքսվելին՝ տեղեկացնելով նրան Կիլիկիայում, մասնավորապես՝ Զեյթունում, տեղի ունեցող իրադարձությունների և ժողովրդի բռնագաղթի մասին։[16]

• Տրապիզոնից ամերիկյան հյուպատոս Հեյզերը դեսպան Մորգենթաուին հայտնում է. «Իշխանությունները հավաքում են բոլոր հայերին՝ կանանց, ծերերին, հղիներին, բացառությամբ միայն կաթոլիկների, և քշում Գյումուշխանե։ Այն երեխաները, որ հաճախում էին դոկտոր և տիկին Քրոֆորդների ղեկավարած Ամերիկյան դպրոցը՝ այժմ տեղափոխվեցին տեղական իշխանությունների ղեկավարած դպրոց, որի տնօրենը նահանգապետն է, իսկ հույն մետրոպոլիտը՝ փոխտնօրենը։ Այս դպրոցում կմնան մինչև 15 տարեկան աղջիկները և 10 տարեկան տղաները։ Մնացած բոլոր երեխաները տարագրվելու են իրենց ծնողների հետ»։[17]

• Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսն իր հյուպատոսական հաշվետվության մեջ նշում է, որ հուլիսի 3-ին, շաբաթ օրը, Մամուրեթուլ-Ազիզից դուրս եկավ երկրորդ քարավանը։ Այն անհամեմատ մեծ է եղել առաջինից, որը Դիարբեքիրով Ուրֆա էր գնացել հինգշաբթի օրը։ Չնայած նրանց վերջնական հանգրվանը նույնը պիտի լիներ, բայց քշել էին հակառակ ուղղությամբ, դեպի Մալաթիա։ Նրանց տարբեր ճանապարհներով տանելու նպատակը շատ պարզ էր՝ իշխանությունները չէին ուզում, որ վերջին քարավանն իմանա, թե նախորդին ինչ ճակատագիր է բաժին ընկել։[18]

• Մուշի գերմանական որբանոցի քույր Ալմա Յոհանսոնը 1915թ. նոյեմբերի 20-ին Կոստանդնուպոլսում Գերմանիայի գլխավոր հյուպատոս Մորդմանին ուղարկած իր հաշվետվության մեջ գրում է. «Հուլիսի 3-ին աքսորվեցին 6000 լուսավորչական և բողոքական ընտանիք, որոնց բոլոր տղամարդկանց սպանեցին և միայն մի քանի կանայք հասան Ուրֆա, բայց ի՞նչ վիճակում... Միաժամանակ տեղ հասան Քղիից, Էրզրումից, Տրապիզոնից, Սամսոնից, Երզնկայից ու այլ տեղերից եկած բնակչության մնացորդները, որոնցից դեռևս կենդանի էին մնացել միայն կանայք և երեխաները։ Մահից ավելի վատ էր նրանց նկատմամբ եղած վերաբերմունքը...»։[19]

*4 հուլիսի*

• Տրապիզոնի նահանգի Սամսոն քաղաքից փոխհյուպատոս Կուքհոֆը դեսպան Վանգենհայմին գրում է. «Ձեռնարկված միջոցառումները բոլոր անատոլիական նահանգներում այնքան դաժան են և անմարդկային, որ հնարավոր չէ անտարբեր մնալ. խոսքն ամբողջ ժողովրդի ոչնչացման կամ բռնի մահմեդականացման մասին է, որի ներկայացուցիչները չեն մասնակցել հեղափոխական շարժումների, ուրեմն՝ անմեղ զոհեր են։ Սամսոնի շրջակա բոլոր հայկական գյուղերը մահմեդականացվել են... Չեն զիջում ոչ մեկին։ Բոլոր հայերն առանց բացառության՝ տղամարդիկ, ծերերը, կանայք ու երեխաները պետք է աքսորվեն... Այսօր իշխանավորների անկոտրում կամքն է իսլամացնել ողջ Թուրքիան, ինչի համար կիրառում են բոլոր միջոցները։ Նրանց մոտ բացակայում է ամենաչնչին գիտակցումն այն ահռելի կորուստների, որ կրում է երկիրն ու նաև՝ արտասահմանյան գործարար աշխարհը՝ հայերին արմատախիլ անելու պատճառով... Սամսոնի տարագիրների աքսորավայրը Ուրֆան է։ Միանգամայն պարզ է, որ ոչ մի հայ քրիստոնյա այնտեղ չի հասնի։ Երկրի խորքից ստացված լուրերը տեղեկացնում են շատ քաղաքների տեղահանված բնակչության անհետացման մասին...»։[20]

• Գերմանիան իր առաջին պաշտոնական հուշագիրն է ներկայացնում Բարձր Դուռ, որտեղ նշվում է. «Հայ ժողովրդի դեմ արևելյան Անատոլիայում կառավարության ձեռնարկած ճնշիչ միջոցառումները թելադրված են զինվորական պատճառներով և օրինական պաշտպանական միջոց են, գերմանական կառավարությունը դեմ չէր դրանց իրականացմանը քանի դեռ դրանք նպատակ ունեին ամրապնդել Թուրքիայի ներքին կայունությունը և ապահովել իրենց ապստամբության փորձերից: Այս տեսակետից գերմանական կառավարությունը լիովին համամիտ է Բարձր Դռան այն մեկնաբանության հետ, որ տրվեց դաշնակից պետությունների (Անտանտի) սպառնալիքներին՝ հայերի դեմ կարծեցյալ դաժանությունների պատճառով: Սակայն տեղական իշխանությունները դիմել են ծայրահեղությունների, որոնց վերաբերյալ Գերմանիան կարծում է, որ լավ կլիներ, եթե Բարձր Դուռը հրահանգեր նրանց ուշադիր լինել՝ պահպանելու համար տեղահանվող հայերի կյանքը և ունեցվածքը»:*[21]

• Սկսվում է Խարբերդի գավառի Հուսեյնիկ, Քեսերիկ, Խոյլու, Դադեմի և Բազմաշեն գյուղերի հարյուրից ավելի ընտանիքների տարագրությունը դեպի Տիգրանակերտ:[22]

• Տրապիզոնի ավստրո-հունգարական հյուպատոս Կվյատկովսկին արտաքին գործերի նախարար Բուրիանին գրած իր հուլիսի 20-ի տեղեկագրում նշում է, որ հակառակ նախօրյա իրենց տված խոստումների, թուրքերը հուլիսի 4-ին առանց նախապատրաստվելու համար ժամանակ տալու, ամենայն հապճեպությամբ, աքսորեցին նաև կաթոլիկ հայերին. որոնց թվում «...անձամբ 73-ամյա եպիսկոպոսական տեղապահը, քույրերը և վենետիկյան մխիթարյանները...»:[23]

*5 հուլիսի*

• Սկսվում են տարագրությունները Սեբաստիայում, որոնց հաջորդեցին ջարդերը:[24]

• Նույնանման տեղահանություններ և դրանց հաջորդող ջարդեր են տեղի ունենում նաև Ադանայի նահանգի Տարսոն քաղաքում:[25]

• Անգորայի նահանգի Յոզղատ քաղաքի մոտ տեղի է ունենում նույն նահանգի Բողազլյան քաղաքից տեղահանված հայերի ջարդը:[26]

• Ս. Էջմիածնից Գևորգ V կաթողիկոսի՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովին ուղղված հեռագրում ասվում է. «Կոստանդնուպոլսից և Կիլիկիայից ստացված իմ տեղեկությունները փաստում են, որ թուրքական կառավարության հրամանով Թուրքիայում տեղի են ունենում հայերի զանգվածային ջարդեր, չլսված գազանություններ. հայերին բռնի տեղափոխում են Իկոնիա և Միջագետք, որտեղ էլ անբարենպաստ պայմաններից և կլիմայից մահանում են, ինչը և թուրքական կառավարության նպատակն է...»:[27]

• Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսն իր հուլիսի 11-ի տեղեկագրում հայտնում է, որ հուլիսի 5-ին Խարբերդում և Մեզիրեում ձերբակալվում են 800 հայ տղամարդ, որոնց 14 հոգանոց իրար կապված խմբերով տանում մի ամայի դաշտավայր և հուլիսի 7-ին բոլորին գնդակա-

* Գերմանիան այդ առաջին հուշագիրը ներկայացրեց հուլիսի 4-ին, այսինքն՝ Վանի դեպքերից երեք ամիս և Մուշի, Էրզրումի, Տրապիզոնի և այլ շրջաններում կատարված կոտորածներից հետո, որը նշանակում է, որ այն զուտ ձևականություն էր և, փաստորեն, համաձայնություն էր տալիս թուրքերի հայաջինջ ծրագրին:

հարում: «Այս մարդկանց հանդեպ որևէ մեղադրանք չէր ներկայացվել, պարզապես սա մի մասն էր այն ծախագծի, ըստ որի ոչնչացվում էր հայ ազգը»՝ գրում է հյուպատոսը:[28]

• Մարզվանի ամերիկյան քոլեջի բժիշկ Մարտենը դիմեց քաղաքի ղեկավարությանը՝ հայերին տեղահանելու կապակցությամբ: Նրան պատասխանում են, որ «...հրամանը տեղական իշխանություններինը չէ, այլ ստացվել է վերևից, որում ասվում է, որ քաղաքում ոչ մի հայ չպետք է մնա»:[29]

*6 հուլիսի*

• Իր հուլիսի 28-ի տեղեկագրում Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Հեյզերը գրում է. «Չորեքշաբթի օրվանից, հուլիսի 6-ից, Տրապիզոնի բոլոր հայկական տները, մոտ 1000, դատարկվեցին, իսկ բնակիչները տեղահանվեցին: Ընդ որում, չպարզվեց անգամ, թե որևէ մեկը նրանցից մեղավո՞ր է, թե՝ ոչ: Եթե նա ազգությամբ հայ էր, ապա դա հիմք էր, որպեսզի նրա հետ վարվեին որպես հանցագործի և տեղահանեին... Մի քանի թեթև նավեր մեկը մյուսի հետևից բարձվեցին և ուղարկվեցին Սամսուն: Բոլորի կարծիքով նրանք խեղդվել էին ծովում: Համընդհանուր տեղահանության առաջին օրերին,- շարունակում է հյուպատոսը,- մի մեծ թիանավ բարձեցին այն տղամարդկանց, որոնց համարում էին հայկական կոմիտեի անդամներ և ուղարկեցին Սամսուն... հետո մի թուրք հայտնեց, որ այդ նավը Տրապիզոնից ոչ հեռու հանդիպել է մեկ այլ նավի՝ ոստիկաններով լցված, որոնք սպանել են բոլորին և նետել ծովը... Մի քանի այդպիսի թիանավեր հեռացան Տրապիզոնից, որոնք սովորաբար վերադառնում էին դատարկ...»:[30]

• Վաղ առավոտյան Մարզվանում հայտնվում են սայլեր, և հայերին կարգադրվում է անմիջապես դուրս գալ քաղաքից:

Ինչպես նշում է իր զեկուցագրում քաղաքի ամերիկյան քոլեջի ուսուցիչը, նրանք հասկացան, որ կառավարությունը մտադիր է ոչնչացնել հայերին: Այդ նպատակով բանտերից ազատված հանցագործները քաղաքից դուրս սպասում էին տեղահանվող հայերին: Երկու շաբաթում տեղահանվել են 12000 հայ:[31]

• Գերմանիացի մի անհայտ պետական գործիչ՝ գերմանական ծրագրերում Ռուսաստանի հետ կապված Թուրքիայի դերի վերաբերյալ իր զեկուցագրում հայերի մասին գրում է. «Որքան էլ տարօրինակ է, մեր ամենամեծ հույսերը կապում ենք մեզ չսիրող հայերի հետ: Հայերի միջոցով մենք աստիճանաբար կներթափանցենք ամբողջ Փոքր Ասիա և Հյուսիսային Պարսկաստան և կդառնանք քաղաքական առումով ոչ միայն ազդեցիկ, այլ նաև մեր ձեռքը կվերցնենք այդ երկրների տնտեսական կյանքը: Ուստի Գերմանիայի համար շահավետ էր հայերին պահպանելը Թուրքիայում...

Թուրքիան մեզ հարկավոր է ոչ միայն որպես մեր անսահման ազդեցության ոլորտ, [այլև] իբրև արգելք Ռուսաստանի դեմ: Դրա համար հարկավոր է ուժեղացնել Թուրքիայի ռազմական հզորությունը Փոքր Ասիայում և, փորձելով կապել Կովկասը Թուրքիայի հետ, Ռուսաստանին ետ մղել Կովկասյան լեռներից այն կողմ:

Այս գործում հայ ժողովուրդը, ապրելով Թուրքիայի սրտում և զբաղեցնելով Կովկասի կենտրոնը, կարող է ծառայել որպես Կովկասը Թուրքիայի հետ կապող օղակ: Նա կոչված է արժեքավոր ծառայությունը կատարելու: Ցավոք, իրենց պահվածքով հայերն ապացուցեցին, որ նրանք ընդամենը սեպ են՝ խրված մի կողմից թուրքերի և մյուս կողմից՝ Անդրկով-

կասի թաթարների միջև....» Շարունակելով իր միտքը՝ հեղինակը նշում է, որ իրենք չէին կարող հայերին տալ այն ամենը, ինչ նրանք ցանկանում էին։ Եվ հայերը գնացին Ռուսաստանի հետևից, որը նրանց «կեղծ խոստումներ էր տալիս»՝ շատ լավ գիտենալով, որ դա կարող է կործանարար լինել հայերի համար։

Զեկուցագրում նշված է նաև, որ Թուրքիայում խորապես համոզված էին, թե Կովկասյան ճակատում Թուրքիայի անհաջողությունները մեծ մասամբ հայերին պետք է վերագրել, և որ «...եթե վերջիններս համառորեն չպաշտպանեին ռուսական գործը Կովկասում, ապա թուրքերի ճանապարհը դեպի Թիֆլիս էապես կհեշտանար։ Թուրքերը չեն կարող դա ներել և այդ պատճառով այդպիսի կատաղությամբ հաշվեհարդար են տեսնում նրանց հետ»։ Անդրադառնալով թուրքերի կողմից հայերի դեմ կիրառվող միջոցառումներին, զեկուցագրի հեղինակը գրում է. «Գերմանիայի տեսակետից սակայն շահավետ չէ այդ աշխատասեր և օգտակար ժողովրդի ամբողջական ոչնչացումը, երբ Միջագետքի անապատները կարիք ունեն հենց նման տարրերի։ Ապրելով Միջագետքում և զբաղվելով երկրագործությամբ, հայ ժողովուրդը նույնիսկ կշահի դրանից...»։ Արդյունքում՝ հայերից ազատված բոլոր հողերը թուրքերը կբնակեցնեն թուրքական ցեղին պատկանող մոհաջիրներով՝ այդպիսով իրականացնելով «Մինչև Թավրիզ և Բաքում բազմաքանակ մահմեդական ցեղերով բնակեցնելու խնդիրը, ինչը և հանդիսանում է միասնական ժողովրդի բաղձալի երազանքը։ Այդպիսով կստեղծվի պողպատյա մի արգելք, որի վրայով Ռուսաստանի համար դժվար կլինի անցնելը»։ Իսկ ռուս-գերմանական ռազմաճակատում Գերմանիայի համար հաղթանակի դեպքում «Թուրքիային կմիացնենք Անդրկովկասը և կստեղծենք ինքնավար Վրաստան՝ դնելով այն Թուրքիայի գերիշխանության տակ... Թաթարները, անշուշտ, կմիավորվեն Թուրքիայի հետ, այսպիսով՝ Արևմտյան և Արևելյան Անդրկովկասն ամուր կերպով կմիաձուլվեն Թուրքիայի հետ։ «Մենք, անշուշտ, կպահպանենք հայերի հանգիստ գոյությունը Կովկասում, սակայն նրանք արդեն մշտապես ստիպված կլինեն հրաժարվել իրենց ազգային գաղափարից։ Հայերը չպետք է բողոքեն նման ավարտի դեմ, քանզի նրանք արժանի են դրան..»։

Այս փաստաթղթի վերջում «1915թ. օգոստոսի 2, Պետրոգրադ» նշումով կա մի մեքենագիր տեքստ՝ անհայտ անձի ձեռագիր ուղղումներով, որն ըստ էության, վերոհիշյալ զեկուցագրի համառոտ շարադրանքն է։

Այստեղ նախ շեշտվում է, որ Գերմանիայի նպատակն է Ռուսաստանին հակադրել Թուրքիան, որը «չի կարող ուժեղ լինել, քանի դեռ հայերը զբաղեցնում են նրա սիրտը՝ Հայաստանը, որը Միջագետքի և Անատոլիայի վրա գերիշխելու բանալին է։ Հայերը միաժամանակ թուրք ժողովրդի մեջ խրված սեպ են։ Նրանք բաժանում են ռուսական թուրքերին (Անդրկովկասի թաթարներին) և պարսկական թուրքերին (Ադրբեջանի թաթարներին) թուրքական ցեղի արմատից (օսմանյան թուրքերից)։ Այս ժողովուրդը պետք է հեռացվի Թուրքիայի համար այդքան թանկարժեք տարածքից։ Թուրքիայում Գերմանիայի տիրապետության համար հարկավոր է քաղաքներում գործուն բուրժուազիա, իսկ Բաղդադի երկաթգծի պահպանման համար՝ ճանապարհի կողքին բնակվող երկրագործներ։ Գերմանիան այդ նպատակի համար իբրև հարմար ժողովուրդ ընտրել է հայերին։ Գերմանիան համաձայնվեց Հայաստանից հայերի զտմանը, այդ պատճառով նրանց քշում են Միջագետք։ Թուրքերին արդեն հաջողվել է նրանցից բացարձակապես մաքրել Հայաստանի կեսից ավելին։

Հայկական հողերը, որոշված է բնակեցնել թուրք մուհաջիրներով: Կարճ ժամանակ անց կիրագործվի այդ չափազանց կարևոր միջոցառումը և թուրք ցեղը միատարր կբնակեցնի ամբողջ երկիրը Բոսֆորից մինչև Բաքու և Թավրիզ: Այսպիսով կամրապնդվի Կովկասի ձգտումը դեպի Թուրքիա: Հայերի մնացած հատվածը կզրկվի իր նշանակությունից՝ սեղմված լինելով միավորված թուրքական ցեղի և ինքնավար Վրաստանի միջև, որոնք իրար հետ կապված կլինեն փոխադարձ վստահությամբ և ազգային շահերով: Այսպիսով Ֆինլանդիայից Լեհաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի վրայով մինչև Չինաստան, Ռուսաստանը կիսվ խեղդված կլինի պողպատյա աքցաններով, որոնց ղեկավարումը կգտնվի Գերմանիայի ձեռքում»:[32]

*7 հուլիսի*

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմը հայտնում է ռայխկանցլեր Բեթման-Հոլվեգին. «Դեռևս 14 օր առաջ հայ բնակչության արտաքսումը սահմանափակվում էր մոտավորապես այն գավառներով, որոնք գտնվում են պատերազմական գործողությունների արևելյան թատերաբեմի մոտ, ինչպես և՝ Ադանայի գավառի որոշ շրջաններով: Դրանից հետո Բարձր Դուռը որոշում է ընդունել այդ գործողությունները տարածել Տրապիզոնի, Մամուրեթ-ուլ-Ազիզի և Սեբաստիայի նահանգների վրա և արդեն ձեռնամուխ է եղել վերևը ասվածի իրագործմանը, թեև երկրի այդ մասերը դեռևս թշնամական ներխուժման վտանգի տակ չեն գտնվում: Այդ գործողությունները և եղանակները, որոնցով կատարվում է արտաքսումը, վկայում են, որ կառավարությունը իսկապես նպատակադրվել է ոչնչացնել հայ ազգին թուրքական պետության մեջ»:[33]

• Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օ. Հեյզերը դեսպան Մորգենթաուին գրում է, որ «Տրապիզոնի վիլայեթի հայ բնակչությունը հաշվվում է մոտավորապես 36000: Տրապիզոնում և շրջակա գյուղերում հաշվվում է մոտավորապես 10000 հայ: Վերջին տվյալներով 5200-ն արդեն տեղահանվել են: Երեխաներն, ըստ ծնողների ցանկության, մնացել և տեղավորվել են քաղաքի տարբեր մասերում գտնվող մեծ տներում: Այս տներում, որոնք թուրքերն անվանում են «որբանոցներ», պահվում են մոտավորապես 3000 երեխա: Ընդունվում են աղջիկներ մինչև 15 տարեկանը ներառյալ և տղաներ՝ մինչև 10 տարեկանը ներառյալ, այս տարիքից մեծերին ստիպում են գնալ ծնողների հետ: Պահվել են մի քանի հայ կանայք և երիտասարդ տիկիններ նորածիններին և փոքր երեխաներին խնամելու համար: Հաստատությունները հսկվում են ոստիկանների կողմից և յուրաքանչյուր հաստատություն ունի մուդիր (կառավարիչ) կամ տնօրեն:

Բժիշկ և տիկին Քրոֆորդներն իրենց դպրոց են ընդունել տեղահանված ծնողների մոտավորապես 300 երեխա, որոնց մի մասը շատ փոքր են, կան նաև նորածիններ:

Որոշ դեպքերում ծնողները թողնում են փող կամ ոսկեղեն՝ երեխաների ծախսերը հոգալու կամ ապահով պահպանության համար: Իհարկե, այս ամենը հակառակ է այն հայտարարության, որ տարածել է կառավարությունը:

Գեներալ նահանգապետը հաղորդել է բժիշկ Քրոֆորդին, որ նրանից պահանջելու են հանձնել երեխաներին, քանի որ կառավարությունը պատրաստ է խնամել նրանց, սակայն մի քանի օրով երեխաներին թողել է, մինչև որ կարգադրություններ կարվեն նրանց տեղահանման վերաբերյալ:

Տեղահանվածների վիճակի մասին շատ անհանգստացնող հաղորդումները համախակի են, և եթե դրանց կեսն էլ պարզվի, որ ճշմարիտ է՝ սարսափելի կլինի:[34]

• Զինված թուրք չեթեները ու քուրդ աշիրեթները պաշարում են Մշո դաշտի Բաղլու, Մեղդի, Զիարեթ և շրջակա գյուղերը և կոտորում բնակիչներին:[35]

• Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին գրում է արտաքին գործերի նախարար Բուրիանին. «Թուրքերի կողմից հայերի նկատմամբ կատարած դաժանությունները անհնարին է միշտ թաքցնել: Դրանք հայտնի են դառնում երկրից դուրս, ի վնաս թուրքերի: Իրոք, բուլղարական և ռումինական մամուլն արդեն հայանպաստ ոգով է ներկայացրել նյութը: Ցավոք, այստեղի իշխանությունները մեղավոր չեն հայերի նկատմամբ իրենց սխալ գործելակերպի մեջ և հնարավոր է, որ այդ հարցով կատարած համառ միջամտությունը վնասի գործին: Ինչպես երևում է, այստեղ նպատակադրվել են վերջնականապես վնասազերծել կասկածելի դարձած հայերին»:

Միաժամանակ դեսպանը նշում է նաև, որ չնայած մեծ վեզիրի՝ իրեն տված հավաստիացումներին, որ բռնագաղթի ժամանակ հայերի նկատմամբ դաժանությունների չեն դիմի, բայց ինքը լսել է, որ դա այդպես չէ, որ դաժան վերաբերմունքով նրանցից խոստովանություն են ուզում կորզել՝ զաղտնի կապերի, ռումբերի թաքստոցների և այլնի մասին:[36]

• Խարբերդից ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսը դեսպան Մորգենթաուին ուղարկած հուլիսի 11-ի տեղեկագրում հայտնում է, որ հուլիսի 7-ին, չորեքշաբթի օրը Խարբերդում և Մեզիրեում ձերբակալված 800 հայ տղամարդկանց տասնչորս հոգանոց խմբերով կապկպել են իրար և քաղաքից մի քանի ժամ հեռավորության վրա գտնվող դաշտում կոտորել: «Զինվոր-ոստիկանները կրակել էին նրանց վրա այնքան, մինչև համայյա բոլորին սպանել էին: Նրանց, ում փամփուշտը չէր սպանել, ոչնչացրել էին դանակի կամ սվինի հարվածներով... Այդ տղամարդկանց ձերբակալել ու ոչնչացրել էին ամբողջ հայ ազգը բնաջինջ անելու ընդհանուր ծրագրի իրագործման շրջանակներում...»:[37]

• Սոֆիայի «Հայաստան» թերթը «Հայկական հալածանքը և օտար մամուլը» խորագրի տակ արտատպում է Բուխարեստի «Le journal des Balkannes» թերթի թղթակից Է. Դը Բերնարդեի թղթակցությունը, որտեղ նշված է. «Սարսափի և զարհուրանքի ճիչեր են հասնում Հայաստանից՝ պատմելով այն բռնությունների և գազանությունների մասին, որոնց զոհ է դարձել խաղաղ հայ ժողովուրդը:

Չկա մի քաղաք, մի գյուղ, մի տուն, մինչև իսկ մի խղճուկ խրճիթ, որ ապականված, քանդված և գրեթե միշտ՝ հրդեհված չլինի:

Այն, ինչ այսօր տեղի է ունենում Հայաստանում, լսված չէ դեռևս և նման քիչ օրինակներ կան պատմության մեջ... Աբդուլ-Համիդի ռեժիմը, որ դժոխային էր հայերի համար, կարելի է ողորմելի համարել այն տարատեսակ գազանությունների համեմատ, որ կատարվում էին Էնվեր փաշայի և քրդերի կողմից:

Բոլոր հայերը, առանց կուսակցական խտրականության, հալածվում են, խոշտանգվում, նետվում զնդաններ, աքսորվում, կոտորվում արյունռուշտ կառավարության հրամանով: Եվ այս ամենը կատարվում է օտար դիվանագիտական ներկայացուցիչների և հյուպատոսների աչքի առաջ:

Գազանությունները օր-օրի ավելի աննկարագրելի և վայրագ են

ղառնում, որովհետև այդ է կամքը կենտրոնական իշխանության, որի խորհրդատուներն են Ֆոն դեր Գոլցը և Ֆոն Զանդերսը...»:[38]

*8 հուլիսի*

• Կարինից Գերմանիայի հյուպատոսը հեռագրում է Վանգենհայմին, որ «...Բաբերդում, Երզնկայում և Դերջանում վերսկսվել են հայերի կոտորածները»:[39]

*9 հուլիսի*

• Տրապիզոնի գերմանական հյուպատոս Բերգֆելդը արտաքին գործերի նախարար Բեթման-Հոլվեգին գրում է այն մասին, որ Տրապիզոնի նահանգում տեղահանվել են 30000 հայեր: Նման զանգվածային տեղափոխությունը 300 կիլոմետր տիֆով վարակված ճանապարհներով, որտեղ չկար սնունդ և գիշերելու տեղ, պետք է, որ հայերի, հատկապես կանանց ու երեխաների մեջ առաջացներ սարսափելի զոհեր: Մի բան, որը արտասահմանում, նաև Գերմանիայում կարող էր առաջացնել արդարացի քննադատություն... Ուստի ինքը փորձել է տեղի նահանգապետի միջոցով թեթևացնել աքսորի պայմանները:

«Վալին ինձ հավաստիացրեց,- տեղակացնում է նա,- որ տեղահանվածների հետ նրանց տեղափոխման ժամանակ ոչինչ չի պատահի: Ես հավատում եմ նրա բարի կամքին և հաստատակամությանը, որ իր տարածքում հայերի հետ ոչինչ չպատահի: Միաժամանակ տեղեկություններ կան, որ ուրիշ տեղերում ձգտում են լրիվ ոչնչացնել հայերին... Փաստորեն Երզնկայի և Դիարբեքիրի միջև հայերը կոտորվել են լեռնային ճանապարհներին՝ ենթադրաբար քրդերի կողմից: Ավելի մեծ ավազակախմբեր, որոնք ղեկավարվում էին ֆրանսախոս մարդկանց կողմից, նկատվել են Էրզրումի և Բաբերդի մոտակայքում: Վերջապես ակնհայտ է, որ մինչև այժմ անվտանգ համարվող շրջանում կարող են կազմվել այդքան խոշոր ավազակախմբեր: Չունենալով իմ կարծիքը հաստատող հիմնավորություն՝ ես չեմ կարող չմտածել, որ երիտթուրքական կոմիտեին կարելի է համարել հայերի դեմ իրականացվող միջոցառումների նախաձեռնողը: Կենտրոնական կոմիտեն, երևում է, ուզում է այս ձևով փակել հայկական հարցը...»:[40]

• Անգորայի նահանգի Կեսարիա քաղաքում տեղակայված 15-րդ զորամասի հրամանատար Շեհաբեդդին շտապ հեռագրով հայտնում է Անկարայի 5-րդ բանակի հրամանատարին, թե Ակդաղմադեն գավառակի կառավարչի խոսքերով մոտ 300 զինված հայ գյուղացիներ Բողազլյանի գավառակի գյուղերից հարձակվել են իրենց գավառակի սահմեդական գյուղերի վրա և ավերել դրանք: Բացի այդ, Բողազլյանի զորակայանի պետի հաղորդման համաձայն, տեղի հայերի մի մասն էլ հարձակվելով խալամական գյուղերի վրա՝ «կատարել են սպանություններ ու կողոպուտ»: Եվ ինքն էլ հատուկ պահակազոր է ուղարկել այնտեղ:[41]

*10 հուլիսի*

• Ուրֆայի կառավարիչը հայերին հրամայում է 48 ժամվա ընթացքում հանձնել իրենց մոտ եղած զենքերը: Սակայն հայերը՝ ինքնապաշտպանության ղեկավար Մկրտիչ Յոթնեղբարյանի շնորհիվ, հանձնում են միայն որսորդական հրացաններն ու անպետք զենքերը:[42]

• Տրապիզոնի նահանգի Սամսոն քաղաքի ամերիկյան հյուպատո-

սական գործակալ Փիթերը դեսպան Մորգենթաուին գրում է. «Մինչև այժմ մոտավորապես 150 ընտանիքներ կրոնափոխ են եղել, իսկ մյուսներն ուղարկվել են երկրի ներքին շրջանները: Սամսոնում կար 5000 հայ: Նրանց տեղափոխեցին շատ վատ պայմաններում, այսինքն՝ կառքեր չկային, կանայք ու երեխաներն անջատվեցին իրենց ընտանիքներից և տեղափոխվեցին սայլերով: Մի խոսքով սարսափելի էր:

Գավառապետն ասաց, որ նույնիսկ դավանափոխ եղածները չեն մնալու և գնալու են Տրապիզոն, Կերասուն, Մարզվան և այլ տեղեր: Թուրքերը ջանք չեն խնայում հավատափոխման գործում...

Ինձ հայտնել են, որ երկրի ներքին շրջաններում կազմել են հայ տղամարդկանց խմբեր, որոնց բոլորին սպանել են գյուղերի բնակիչները: Կանանց և երեխաների համար կստեղծվեն այնպիսի դաժան պայմաններ, որ նրանք կմեռնեն սովից, ծարավից և հուսահատությունից: Սա մի ահավոր կոտորած է, որը հիշեցնում է այն ժամանակները, երբ Կոստանդնուպոլսի բոլոր շներին հավաքեցին և ուղարկեցին ոչնչանալու մի կղզում...»:[43]

• ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն պետքարտուղարին ուղարկած հուլիսի 10-ի տեղակագրում նշում է, որ «Հայերի կոտորածներն ընդունում են աննախադեպ չափեր: Ամենատարբեր շրջաններից զեկուցագրերը վկայում են, որ խաղաղ հայ բնակչությանը արմատախիլ անելու փորձ է արվում՝ կամայական ձերբակալությունների, կողոպուտի և կոտորածի վերածվող սպանությունների հաճախակի դեպքերով և նրանց թալանելով ու չքավորության մատնելով: Այդ միջոցառումները ոչ թե պատասխանն են ժողովրդի կամ ֆանատիկոսների պահանջների, այլ լրիվ կամայական են և ուղղորդվում են Կ. Պոլսից՝ ռազմական անհրաժեշտության անվան տակ և հաճախ այն շրջաններում, ուր անհավանական է, որ ռազմական գործողություններ տեղի ունենան: Մուսուլման և հայ բնակիչներն ապրել են համերաշխ, բայց քանի որ որոշ հայեր, որոնցից շատերը ռուսահպատակ են, որպես կամավոր Կովկասում միացել են ռուսական բանակին, և քանի որ ոմանք հարել են զինված հեղափոխական շարժումներին, իսկ ուրիշները օգնել են ռուսներին գրավելու Վանի շրջանը՝ սարսափելի վրեժ է լուծվում (դրա համար): Տուժողների մեծ մասն անմեղ են և հավատարիմ են եղել օսմանյան կառավարությանը: Համարյա բոլորը ծերեր են և կանայք: 25-40 տարեկան բոլոր տղամարդիկ թուրքական բանակում են: Զոհերին տներից դուրս են հանում և ոտքով ուղարկում այնպիսի շրջաններ, որտեղ նրանք օտար են, և ոչ մի պատրաստություն չի տեսնվել նրանց տեղավորելու և կերակրելու համար...

Միակ դեսպանատունը, որն ի վիճակի է նպաստելու այս վայրագությունների մեղմացմանը, Գերմանիայինն է, բայց ես կարծում եմ, այն պարզապես կբավարվի խորհուրդ տալով և ձևական բողոք ներկայացնելով, ինչը հավանաբար նախատեսված է (սոսկ) արձանագրելու և հետագայում պատասխանատվությունից խուսափելու համար... Ես բազմիցս խոսել եմ Մեծ վեզիրի հետ, խստորեն խնդրել ներքին գործերի և ռազմական նախարարներին դադարեցնել այս հալածանքները: Իմ փաստարկները, բացի Կոստանդնուպոլսին վերաբերվողներից, անօգուտ էին...»:[44]

• Տրապիզոնից ամերիկյան հյուպատոս Օսկար Հեյզերը դեսպան Մորգենթաուին գրում է. «Կաթոլիկ հայերը, ծերերն ու այրիները տեղահանվեցին մյուս հայերի հետ, միակ բացառությունը կառավարության աշխատակիցների, երեխաների, հիների և հիվանդների համար է արվել: Վերջիններիս կտեղափոխվեն բուժվելուց հետո... Պարզվում է, որ բազմաթիվ

դիակներ է գետը տարել Տրապիզոն, շատերն էլ կարելի է տեսնել անտառում, ճանապարհի ուղղությամբ: Տեղահանվածների վիճակը, ինչպես հաղորդում են սայլապանները և ուրիշ մարդիկ, որ ճանապարհին տեսել են նրանց, սարսափելի է…

Հյուպատոս Դևիսը Խարպուտից ինձ հաղորդում է, որ ամերիկյան քոլեջի պրոֆեսորներին տանջել են, ոմանք տանջանքից մահացել են կամ կորցրել բանականությունը: Բանակ զորակոչված հարյուրավոր երիտասարդ հայ տղամարդիկ, որոնցից ոմանք ամերիկյան քոլեջի ուսանողներ են, աքսորվել են առանց սննդի, հագուստի կամ դրամի: Երկու խմբերից էլ ճանապարհին շատերն են մահացել: Ինչպես երևում է, պատրաստվում են ավելի մեծ խմբեր աքսորել… Թվում է, թե գոյություն ունի հայ ազգը խորտակելու համակարգված ծրագիր…»:[45]

• Բիթլիսի նահանգի Մուշ քաղաքի շրջակայքում տեղադրված 11 քնդանոթների մի քանի ժամ տևած ռմբակոծությունից հետո սկսվում է կոտորածը և 15000 բնակիչներից ազատվում են միայն 200 հոգի, որոնք կարողանում են ապաստանել Սասունում: Մուշի գավառի 59000 հայերից ազատում են 9000-ը: Քաղաքի փոքրաթիվ հայ ինքնապաշտպանները Հակոբ Կոտոյանի գլխավորությամբ երեք օր անընդհատ դիմադրում են հարձակվող թուրքական ուժերին, իսկ նրանց մի մասն էլ ճեղքելով թշնամու օղակը՝ բարձրացնում են լեռները:[46]

• Խարբերդի գերմանական վարժարանի տնօրեն քարոզիչ Էհմանը դիմում է դեսպան Վանգենհայմին, որ նա միջնորդի և Խարբերդի դեռևս չտարագրված փոքրաթիվ ընտանիքների կանանց, երեխաներին ու ծերերին «կայսերական բարի մի հրովարտակով պաշտպանություն և ողորմածություն շնորհիվի»: Վանգենհայմն, իհարկե, Թալեաթից պատասխան է ստանում, թե, իբր, նրանք չեն աքսորվելու:[47]

• Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին թիվ 249 տեղեկագրով հայտնում է Վիեննա. «Որպես վրեժ այն բանի համար, որ օսմանահպատակ բազմաթիվ հայեր ծառայում են ռուսական Կովկասյան բանակում, որոնք Վանի շրջանը ռուսների կողմից գրավելու ժամանակ ապստամբական շարժում առաջացրին, նաև այսպես կոչված հայկական ժամանակավոր կառավարություն ստեղծեցին թուրքահայ նախկին պատգամավոր Բաստրմաջյանի գլխավորությամբ, թուրքերը սկսեցին հայերի արտաքսումը Թուրքիայի նրանց կողմից բնակեցված շատ վայրերից: Բազմահազար հայեր, նաև խառնաղ բնակչությունը, արդեն Սև ծովի առափնյա վայրերից ուղարկվել են դեպի ներքին Անատոլիա, հիմնականում դեպի Մոսուլ… Մինչև հիմա կատարվող ճնշումների վրա այսուհետև ավելանում է նաև հավատափոխությունը՝ խլամ ընդունելը… Թուրքերի նշված գործելակերպը նաև շատ բացասաբար է անդրադառնում գերմանացիների վրա, երբ ասում են, որ այս ամենը գերմանացիների հանդուրժողությամբ կատարվեց»:[48]

• Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսն իր հուլիսի 11-ի տեղեկագրում նշում է, որ Խարբերդում և Մեզիրեում ձերբակալված 800 հայերին հուլիսի 7-ին քրդական մի գյուղի մոտ կոտորելուց հետո էլ «…երեկ երեկոյան (հուլիսի 10-ին) դարձյալ զինվորական և քաղաքացիական իշխանությունների կողմից ձերբակալված մի քանի հարյուր տղամարդիկ Խարբերդից երկու ժամ հեռավորության վրա արժանացան նույն ճակատագրին: Նույնը պարբերաբար տեղի է ունենում նաև գյուղերում…

Մի քանի շաբաթ առաջ Իչմե և Հապուսի գյուղերից, որ այստեղից

չորս-հինգ ժամ հեռավորության վրա են գտնվում, երեք հարյուր տղամարդու հավաքել, տարել են լեռները և մորթել: Դա ոչ մի կասկած չի հարուցում. այդ գյուղերից բազմաթիվ կանայք նույնն են պատմել: Ուրիշ բնակավայրերից էլ են պարբերաբար նման հաշվեհարդարի լուրեր հասնում: Թվում է, որ գոյություն ունի բոլոր տղամարդկանցից ազատվելու որոշակի ծրագիր...»:[49]

• Թուրք զինվորներն ու բանտերից հատուկ այդ նպատակով ազատ արձակված ոճրագործները սկսում են հավաքել Մշո դաշտի հարյուրից ավելի գյուղերի տղամարդկանց: Իսկ Մեղրագոմ, Ալիջան, Խասգեղի և ուրիշ գյուղերի բնակիչներից շատերին այրեցին խարույկների վրա, որի պատճառով էլ շատ գյուղերում դիմադրեցին մինչև վերջին փամփուշտը:

Մշո դաշտի 60000 հայերից միայն մի փոքր մասն ազատվեց՝ անցնելով ռուսական սահմանը, իսկ մի մասն էլ ապաստան գտավ Սասունում:[50]

• Մոսուլից գերմանական հյուպատոս Հոլշտայնը դեսպան Վանգենհայմին գրում է, որ իրենց մոտ գտնվող Մարդին քաղաքի նախկին գավառապետը պատմել է. «Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդ բեյը կատաղած, արյունախում շան նման մոլեգնում էր նահանգի քրիստոնեության վրա: Վերջերս Մարդինում այդ նպատակի համար ետ կանչված ժանդարմերիայի միջոցով մի գիշերվա ընթացքում հավաքել տվեց 700 քրիստոնյաների (հիմնականում հայեր), որոնց մեջ էր նաև հայոց եպիսկոպոսը և քաղաքի մոտակայքում մորթել տվեց նրանց: Ռեշիդ բեյը շարունակում է իր արյունարբու գործը անմեղների նկատմամբ, որոնց թիվն այսօր անցել է երկու հազարից...»:[51]

• Կեսարիայի 15-րդ զորամասի հրամանատարի Շահաբեդդին Անկարայի 5-րդ զորաբանակի հրամանատարին շտապ հեռագրով տեղեկացնում է, թե Ակդաղմադենի գավառակի կառավարչի իրեն հայտնած տեղեկության համաձայն մոտ 300 զինված հայ գյուղացիներ Բողազլյանի գավառակի գյուղերից հարձակվել են իրենց գավառակի սահմեդական գյուղերի վրա և ավերել: Բացի այդ, ինչպես հաղորդել է Բողազլյանի գավառակի զորակայանի հրամանատարը, տեղի հայերի մի մասը հարձակվել է իսլամական գյուղերի վրա՝ «կատարելով սպանություններ ու կողոպուտ», իսկ ինքը հատուկ մի պահակախումբ է ուղարկել այդտեղ:[52]

• Ադանայի նահանգի Հարունիե քաղաքի գերմանական որբանոցի տնօրեն Ջոն Դոբելերը դեսպան Վանգենհայմին ուղարկած նամակում, անդրադառնալով թուրքական կառավարության կողմից իրականացվող հայերի տեղահանությանը և դրա իրականացման դաժան ձևին, գրում է. «... Տասնամյակներ շարունակ Թուրքիայում գերմանացիները կարող էին հանուն հայերի հանդես գալով՝ նպաստել թուրքական նորաստեղծ կառավարությունն արդարացի դարձնելուն, ինչն էլ կլիներ մեծ օգնություն թուրքերին ու նաև կնպաստեր Գերմանիայի հեղինակության բարձրացմանը: Իսկ այսօր, հայերի նկատմամբ կիրառվող դաժանություններից հետո մի անգամ չէ, որ գերմանացիներից ինքը լսել է «մենք ամաչում ենք գերմանացի լինելու համար» արտահայտությունը: Եթե կհակաճառեն, որ դա Թուրքիայի ներքին գործն է, «ինչ կուզի կանի իր երկրի հետ», ապա այդ հակաճառությունները նույնքան հին են, որքան էլ դրանց օգտագործումը: Այս դեպքում, առաջին հերթին խոսքն այն մասին է, որ Գերմանիան դառնում է պատասխանատու այստեղի քրիստոնյաների ողբալի վիճակի համար...»:

Վերջում Դոբելերը խնդրում է միջոցներ ձեռնարկել՝ մեղմացնելու

հայերի նկատմամբ կիրառվող դաժանությունները:[53]

*11 հուլիսի*

• Թալեաթը Տիգրանակերտի, Ուրֆայի և Տեր-Զորի կուսակալներին հրահանգում է տարագրության ընթացքում մահացած հայերի անթաղ դիակները թաղել տալ՝ գետերի, լճերի և փոսերի մեջ գցելու փոխարեն, իսկ անտեր և լքված գույքն այրել:[54]

• Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսը դեսպան Մորգենթաուին տարագրված հայերի մասին գրում է. «Անխափան գործող համակարգի համաձայն, քրդական ոճրախմբերը թաքնվում են ճանապարհին և սպասում նրանց, որպեսզի բնաջնջեն հատկապես տղամարդկանց, ի միջի այլոց նաև՝ կանանց ու երեխաների մի մասին: Սա, թվում է, ամենայն մանրամասնությամբ նախապատրաստված, ամենարդյունավետ սպանդն է, որը երբևէ տեղի է ունեցել այս երկրում: Տարագրվող քարավաններում շատ քիչ տղամարդ է մնացել, որոնցից ազատվելու ավելի վստահելի, արագ գործադրվող միջոցներ են կիրառվել…»:[55]

• Անգորայի նահանգի Յոզղատ քաղաքի գավառապետը թիվ 138 ծածկագիր հեռագրով հայտնում է նահանգապետին, որ նախորդ օրը Բողազլյանի գավառակի կառավարիչի այն տեղեկությունը, թե իբր հայերը հարձակվել են մահմեդական գյուղերի վրա և ավերել, կեղծ է. «Ստուգումից պարզվեց, որ ոստիկանապետի հաղորդած տեղեկությունները շատ են չափազանցված»:[56]

• Գերմանական “Algemeine Missiones Zeitschrift” (միսիոներական տեսության և պատմության ամսագիր) հանդեսի նոյեմբերյան համարի՝ Երզնկայի հայերի կոտորածների մասին հոդվածում, նշվում է, որ ականատեսի վկայությամբ. «Հուլիսի 11-ին անպաշտպան աքսորականների հետևից ուղարկվեցին կանոնավոր զորքեր, որպեսզի «պատժեն քրդերին»: Սակայն դրա փոխարեն, նրանք կոտորեցին ողջ անպաշտպան ժողովրդին, որը մեծ մասամբ կազմված էր կանանցից ու երեխաներից: Եվ դրան մասնակցած թուրք զինվորներից իմացանք, թե ինչպես էին կանայք ծնկաչոք աղաչում խնայել իրենց և ինչպես նրանցից ոմանք իրենց երեխաներին գցում էին գետը»:

Ամսագրի այս համարի տպագրությունից անմիջապես հետո, Չինվորական մամուլի Բեռլինի գերատեսչությունը արգելեց այդ հոդվածի տարածումն ու արտատպությունը:[57]

*12 հուլիսի*

• Շարունակվում է Մուշ քաղաքի հայկական թաղամասերի գնդակոծությունն ու հրետակոծությունը: Ինչպես գրում է իր հաղորդագրության մեջ քաղաքի գերմանական որբանոցի քույր Ալմա Յոհանսոնը. «…զինված էին նաև Մուշի բոլոր թուրքերը և հարմար տեղաբաշխված զինվորների մեջ, քանի որ գիտեին, թե որտեղ կարելի է որս կատարել: Այստեղ և այնտեղ տներից պատասխան կրակ էր բացվում՝ ի նշան վերջին դիմադրության: Շուտով ամենուրեք հրդեհ բռնկվեց: Հաջորդ առավոտյան մեր տան (որբանոցի) մոտով անցավ երեխաներից կազմված առաջին քարավանը: Ես չեմ կարող նկարագրել այն ինչ տեսա…»:[58]

• Թուրքական զորքերը հարձակվում են Մշո գավառի Կառնեն գյուղի վրա, որտեղ նրանց օրհասական դիմադրություն էին ցույց տալիս գյուղի մի բուռ հայ ինքնապաշտպանները: Մարտը տևեց մինչև երեկո, երբ արդեն

քնդանոթները ավերել էին ամբողջ գյուղը:[59]

• Կոստանդնուպոլսում թուրքական Վոլֆ հեռագրական գործակալությունը հրապարակում է թուրքական չորրորդ զեկույցը, որտեղ հայերին համարում են դավաճաններ «...որ ելել են իրենց հայրենիքի դեմ, անցել են թշնամու կողմը և պատճառ ու գործիք դարձել անգութ ոճիրների: Իսկ կառավարությունը հանցավորներին պատժելու համար վարվում է մեծագույն խոհեմությամբ, օրենքին համապատասխան և իր բարյացկամ պաշտպանությունն է տալիս Թուրքիայում ապրող բոլոր պարկեշտ քաղաքացիներին, որոնց մի մասը կռվում է թուրքական բանակի շարքերում»:[60]

• Թուրքական կառավարությունը արտասահմանի իրենց դեսպանատներին ուղարկած մի հեռագրով հայտնում է, թե հայ հեղափոխականները, թվով 500-ից ավելի հրոսակներ և զինվորական դասալիքներ, հունիսի 15-ից սկսած գրավել էին Շապին Գարահիսարը և այրել բերդը: Թուրքական իշխանությունները էլ ստիպված նրանց դեմ թնդանոթ են գործածել ու միայն հուլիսի 3-ին պարտության մատնել նրանց: Հենց սա էլ, իբր, ներքին գավառներից հայերի տեղահանության անհրաժեշտությունը ստեղծեց:[61]

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմը բողոք է հղում ներքին գործերի նախարար Թալեաթին՝ Տիգրանակերտի կուսակալ Ռեշիդ բեյի՝ Տիգրանակերտի շրջակայքում և Մարդինում կատարած ջարդերի կապակցությամբ, որոնց զոհ էին գնացել 700 հայեր: Նա գրում է. «Իշխանությունների պահանջով Ռեշիդ բեյը կազմակերպել է քրիստոնյա բնակչության կոտորածներ, առանց խտրականություն դնելու հայերի և մյուս քրիստոնյաների միջև, որոնք պատկանում են այլ դավանանքի՝ չհոգալով անգամ այն մասին, թե ով է մեղավորը: Վերջերս տեղի է ունեցել հետևյալ փաստը: Ռեշիդ բեյի հրամանով ‘Դիարբեքիրի ժանդարմները գնացել են Մարդին և ձերբակալել տեղի հայոց եպիսկոպոսին՝ մեծ թվով հայերի և այլ քրիստոնյաների հետ, թվով 700 մարդու, որոնց գիշերով տարել են քաղաքից հեռու գտնվող մի վայր և այնտեղ ոչխարների նման մորթել: Այս պարբերական ջարդերի զոհերի ընդհանուր թիվն անցնում է 2000-ից…»:[62]

• Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օսկար Հեյզերը դեսպան Մորգենթաուին գրում է, որ լուրեր են պտտվում, թե Թուրքիայի հակառակորդ բոլոր երկրների քաղաքացիները ևս պետք է տեղահանվեն: «Հայերի ընդհանուր տեղահանությանը միացել են ռուսահպատակ, պարսկահպատակ և նույնիսկ երկու բուլղարահպատակ հայեր…: Հուսով եմ, որ հանուն մարդասիրության, սա չի կիրառվի, սակայն, եթե այն անխուսափելի է, ապա պետք է արվի կարգին և չպետք է թույլ տալ, որ վերածվի մասսայական կոտորածի…»:[63]

• Գերմանիայի դեսպանատան աշխատակից Մորդմանի ծանուցման մեջ նշվում է, որ հայոց պատրիարքի՝ իրեն հաղորդած տեղեկությունների համաձայն, Դիարբեքիրում դրությունը վատ է: «Քսան հայի նախաքննության ընթացքում ծեծել են մինչև մահ, այնտեղի եպիսկոպոսն էլ հուսահատությունից ինքնասպան է եղել: Իսկ Վարդգես էֆենդին հակահեղափոխության ժամանակ շաբաթներով իր մոտ էր թաքցրել հայտնի Հալիլ բեյին»:[64]

• Ի պատասխան հունիսին թուրքական պառլամենտի նախկին պատգամավոր Դագավարյանի կնոջ՝ դեսպան Վանգենհայմի կնոջը գրած խնդրագրի, որով նա ռազմական դատարանում դատվելու համար Վարդգեսի, «Ազատամարտի» խմբագիր Զարդարյանի և Ակնունու կանանց ու հարազատների անունից խնդրում էր միջամտել, որ նրանց մահվան չդատապարտեն, Կոստանդնուպոլսում Գերմանիայի գործերի հավատարմա-

տար Նոյրաքը գրում է. «Ես դեմ եմ: Այս պահին մենք չենք կարող ավելին անել, քան արել ենք մինչ այժմ»:[65]

*13 հուլիսի*

• Պոլսի հայոց Զավեն պատրիարքը Բուլղարիայի հայոց առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանին գրած նամակում, մի անգամ ևս ներկայացնելով հայության օրհասական վիճակը, խնդրում է, որ դիմի չեզոք պետություններին և նրանց գութը շարժելով գուցե հնարավոր լինի փրկել Օսմանյան կայսրության հայերի մնացորդներին:[66]

• Տիգրանակերտի հարուստ կանանցից կազմված երկու աքսորախմբեր, թվով 510 հոգի, սրի են քաշվում Մոսուլի գավառի Տարա գյուղի մոտ:[67]

• Հայկական կամավորական գնդերն ու ռուսական բանակը գրավում են Բիթլիսի գավառի Դատվանի շրջանը, որի հետևանքով թուրքերն ու քրդերը թողնում և հեռանում են Մշո դաշտի արևելյան կողմերը, սակայն ռուսական բանակը սխալ հետախուզական տվյալների պատճառով կանգ է առնում և սկսում ժամանակավորապես նահանջել:[68]

• Կիլիկիայի Անտիոքի ծոցի հայկական վեց գյուղերի բնակչությանը տեղահանվելու համար ութ օր ժամանակ է տրվում, սակայն լավ գիտակցելով, թե իրենց ինչ է սպասվում, նրանք որոշում են բարձրանալ Մուսա լեռ և դիմադրել թշնամուն:[69]

• Ամերիկացի միսիոներ Էռնեստ Պատրիչն իր հուլիսի 13-ի նամակում գրում է, որ թուրքական կառավարության որոշմամբ է տեղի ունենում հայերի կոտորածը, և ոչ մի դիվանագիտական ճնշում չի կարող փոխել այն: «Մենք համոզված ենք, որ Սվազի, Էրզրումի և Խարբերդի նահանգներից 600000 մարդու ճանապարհին սովամահություն է սպասվում, քանի որ նրանց թույլ են տալիս վերցնել ընդամենը մի քանի օրվա սնունդ ու շատ քիչ փող...»:[70]

• “The New York Times”-ը գրում է, որ ստացված տեղեկությունների համաձայն Բիթլիսից արևելք ռուսները ճնշել են 30000-անոց թուրքական ուժերին: Ի պատասխան՝ նահանջող թուրքերը Բիթլիսում ջարդեր են կազմակերպել: Չնայած ջարդերին ու համաճարակին, հայերը խիզախորեն դիմադրել են: Նրանց օգնության են հասել Ամերիկայից ժամանած 160 հայ կամավորները:[71]

*14 հուլիսի*

• Երեկոյան Խարբերդից դուրս է գալիս քառասուն հոգուց բաղկացած մի աքսորախումբ, որի կազմում էր քաղաքի կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոս գերապայծառ Իսրայելյանը, նրան ուղեկցող կրոնավորները, ֆրանսիացի օրիորդ Մարգարիտ Գաման և 25 հայ ընտանիքներ, որոնք նահանգապետից կյանքի ապահովության արտոնագիր էին ստացել: Նրանց կառքեր էին տրամադրել և անվտանգությունն ապահովող ոստիկանների մի հատուկ խումբ՝ նշում է Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսը դեսպան Մորգենթաուին հղած հուլիսի 24-ի իր տեղեկագրում:[72]

• Անգորայի նահանգի Կեսարիայի գավառի Բողազլյան գյուղաքաղաքի զորակայանի հրամանատար գնդապետ Մուստաֆա բեյը ծածկագիր հեռագրով տեղեկացնում է Կեսարիայի տասնիհինգերորդ զորամասի հրամանատար հազարապետ Շեհաբեդդին բեյին, որ ինքը՝ «...Ղեկավարությանը հանձնելու նպատակով, գավառակի ղեկավարությունից խնդրել է

ավանի և շրջակայքի 1500 հայերի անունները ու թիվը պարունակող մատյանը, սակայն այն չի ստացել: Իսկ գավառակի կառավարիչն իրեն բանավոր հայտնել է, որ ավանի և շրջակայքի 1500 հայերն արդեն ջարդվել են…»:[73]

• Թուրքիայի պաշտպանության նախարար Էնվեր փաշան իր թիվ 6432 հրամանով բոլոր բանակների հրամանատարներից պահանջում է հավաքել և պահել հայերի ապստամբական բոլոր շարժումների մասին վկայությունները, գործող անձանց լուսանկարները և ամեն ամիս ուղարկել համապատասխան ղեկավարությանը: «Անհրաժեշտ է ամեն օր,- գրում է նա,- հավաքել ու պահել բոլոր ապացույցները, բոլոր վավերագրերը, որոնք կարող են աշխարհին արդարացնել մեր կատարած բոլոր միջոցառումներն ու վերաբերմունքը,որ մենք որդեգրել ենք հայերի հեղափոխական շարժումները խորտակելու համար»:[74]

• Օտարերկրյա միսիոներների լիազորների ամերիկյան խորհրդի քարտուղար Ջեյմս Բարտոնը ԱՄՆ-ի պետքարտուղարին հեռագրում է. «Թուրքիայի տարբեր մասերից ստացված հաղորդագրությունները վկայում են թուրքերի կողմից ամերիկացիների (համաձայն հուլիսի 2-ի թվագրված նամակի, պետք է կարդացվի «հայերի» (file no 867. 116 / 345) - Ծան. բնագր.) նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մասին: Հնարավոր չէ՞ որևէ բան անել` զսպելու համար այդ դաժանությունները»:[75]

• Ուրֆայի շվեյցարական նպաստամատույց կազմակերպության աշխատակից բժիշկ Յակով Քյունցլերն իր մի նամակում գրում է, որ ամսի 14-ին Ուրֆայից «...աքսորվեցին 10000 կանայք և երեխաներ, որոնցից գեղեցիկներին տարան հարեմները, իսկ մնացածները մեռնելու են հարավային մի վայրում, քանի որ հաց չունեն…»:[76]

*15 հուլիսի*

• Խարբերդի նահանգի Մալաթիա քաղաքում և գավառում սկսվում են ջարդերն ու տեղահանությունները:[77]

• Թալեաթը հրահանգում է ենթակա իշխանություններին տեղահանված հայկական գյուղերը պահպանել իրենց ներկա վիճակով` հետագայում այնտեղ ուղարկվելիք մահմեդականների համար, «...որոնք պետք է խմբովին հաստատվեն հայերից դատարկված հարյուրից-հարյուրհիսուն տուն հաշվվող գյուղերում»:[78]

• Էրզրումի նահանգապետ Թահսին բեյը Կոստանդնուպոլիս է ուղարկում մի ծածկագիր հեռագիր, որով բացահայտվում են «Թեշքիլաթը մահուսեի» և դրա հետ համագործակցող ժանդարմների կողմից հայերի հանդեպ կիրառվող վայրագությունները: «Ֆալիք անունով մի լեյտենանտ տիրացել է Արաբյանի չորս աղջիկներին, իսկ լեյտենանտ Քյամիլ էֆենդին հափշտակել է 1863 լիրա գումար, 35 բեռ ապրանք և մեծ քանակությամբ զոհարեղեն: Պետք է այդ վայրագություններին վերջ տալ: Դրամի և կնոջ համար կատարվածը ծայր աստիճան ամոթալի են ու անմարդկային: Մանավանդ պետք է վերջ տալ ամենուրեք «Թեշքիլաթը մահուսե» անվան տակ գործող հրոսակներին: Խարբերդի վալին հաղորդում է, որ բոլոր ճանապարհները լիքն են կանանց և երեխաների դիակներով, որոնց չեն հասցնում թաղել…»:[79]

• Մարդին քաղաքում, երբ արդեն տղամարդ չէր մնացել, թուրքերը սկսում են հավաքել հարուստ ընտանիքների կանանց և երեխաներին:[80]

• Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆն արտաքին գործերի

նախարար Սազոնովին գրում է, որ իրեն է այցելել Նուբար փաշան և ասել, որ գնացել է Փարիզ և Լոնդոն՝ որպես կաթողիկոսի վստահված անձ, որի ծրագիրը հաստատել է կայսերական կառավարությունը: Այդ ծրագիրը ենթադրում է վեց հայկական նահանգների և Կիլիկիայի ինքնավարություն՝ չեզոք երեք տերությունների հովանավորությամբ:

«Նա ինձ ասաց, որ այդ ծրագիրը համապատասխանում է Ռուսաստանի տնտեսական և քաղաքական շահերին, ինչպես նաև արժանի է Ֆրանսիայի և Անգլիայի բարեհաճ ուշադրությունը, քանի որ թուրքական կայսրության բաժանումն Ասիայում դարձել է անխուսափելի...»:[81]

• Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի ռազմական կցորդի՝ իրենց բանակի գլխավոր հրամանատարության տեղեկատվության բաժնին ուղարկած զեկուցագրում նշվում է. «Հայ ազգաբնակչությունը Թուրքիայում դաժանորեն կեղեքվում է: Զենք կրելու ունակ արական սեռի բնակչությանը մյուսներից բաժանելով՝ մեծ մասամբ կոտորել են, իսկ երեխաները, կանայք և ծերերը, իբր, ներքին Անատոլիայում են վերաբնակեցվել, բայց իրականում ճանապարհին սպանվել են»:[82]

• Քուրդ ջարդարարները հարձակվում են Մուշի գավառի Խսիգյուղ, Նորաշեն և Քրդագոմ գյուղերի վրա, կոտորում բոլոր տղամարդկանց, իսկ կանանց և երեխաներին քշում մարագներն ու այրում:[83]

• Թուրքիայում Բուլղարիայի լիազոր ներկայացուցիչ Ն. Կոլուշևը նախարարների խորհրդի նախագահ դոկտոր Վ. Ռադոսլավովին գրում է. «Հայերի ջարդերն ու հալածանքները շարունակվում են, որոնք ստանում են այս ժողովրդին վերջնականապես բնաջնջելու ահավոր կերպարանք: Ամենուրեք հայկական բնակավայրերը ամբողջովին ամայացվում են, կանայք ուղարկվում են թուրքական կենտրոններ և հարեմներ, երեխաները բաժանվում են թուրք ընտանիքների միջև, տղամարդիկ աքսորվում են Միջագետք, Արաբիա և այլ հեռավոր ծայրամասեր...»:[84]

• Մոսուլից գերմանական հյուպատոս Հոլշտայնը Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությանը հեռագրում է.

«Դիարբեքիրի նահանգապետի հրամանով վերջերս սպանվել է Միդիաթի կայմակամը (մահմեդական), որովհետև հրաժարվել էր կոտորել տալ իր շրջանի քրիստոնյաներին:

Դիարբեքիրի վիլայեթից այստեղ աքսորված հայերից տեղ են հասել միայն կանայք և երեխաները՝ սկզբնական թվաքանակի միայն մեկ երրորդը: Կանանցից ջահելները բաժանվել են քրդերի մեջ: Այստեղի վալին միջոցներ է ձեռնարկել՝ Մոսուլի նահանգում կոտորածների առաջն առնելու համար, սակայն վախենում է, որ այս միջոցառումներն արդեն ուշացել են»:[85]

• Նախորդ օրը Խարբերդից տարագրված աքսորախումբը, որի կազմում էին հայ կաթոլիկ եպիսկոպոսը, կրոնավորներ և ֆրանսիացի օրիորդ Գաննոն, գնդակահարվում է Քյազիմ խան բնակավայրից ոչ հեռու, մի ձորում:[86]

• “The New York Times”-ը գրում է, որ “Associated Press”-ի թղթակիցը Թուրքիայում տեսել է շատ գերմանացիների, որոնք զբաղված էին զինվորական որևէ բաժանմունքում: «Ակնհայտ է, որ նրանց ազդեցությունը բանակի վրա մեծ է: Նրանց հիմնական ուշադրությունը կենտրոնացված է Դարդանելի վրա»:[87]

*16 հուլիսի*

• Կոստանդնուպոլսի «Վոլֆ» հեռագրական գործակալությունը հրապարակում է թուրքական հինգերորդ զեկույցը, որտեղ հայերը մեղադրվում էր ըմբոստության, իբր մի լայնածավալ ծրագիր մշակելու մեջ, ինչը բացահայտվեց, հեղինակները, իբր, պարզապես հեռացվեցին սահմանամերձ և այն շրջաններից, որտեղ կային զորակայաններ:[88]

• Թուրքական բանակի գլխավոր շտաբի պետերից գերմանացի զորավար Բռոնզարդ ֆոն Շելլենդորֆը գլխավոր շտաբի անունից և իր ստորագրությամբ բանակի հրամանատարներին մի հրաման է ուղարկում, որտեղ շեշտվում է, որ «...բացարձակապես անհրաժեշտ է հսկել տեղահանված հայերի ու նրանց ունեցվածքի վրա և որևէ բողոքի առիթ չտալ: Պահանջում ենք խստորեն»:[89]

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմը ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին Սամսունի հյուպատոս Կուկհոֆի հուլիսի 4-ի զեկուցագրի մասին գրում է. «...Մի կողմից հյուպատոսի զեկուցագիրը կրկին հաստատում է, որ հայերի դավադրություն իրականում գոյություն չի ունեցել, իսկ մյուս կողմից՝ թուրքական կառավարության դաժան միջոցառումները չեն կարող արդարացվել: Ցավոք, իմ ազդեցությունը Բարձր Դռան վրա միայն փոքր հաջողություններ է խոստանում:

Վերջին ժամանակներս Ձերդ գերազանցությանն ուղարկած իմ համախակի հաղորդագրությունները կատարվում են այն մտահոգությամբ, որ մեր թշնամիները հետագայում կարող են մեզ մեղադրել թուրքերի հետ համագործակցության մեջ, և իմ զեկուցագրերի շնորհիվ անհրաժեշտության դեպքում կարող ենք ապացուցել թշնամական աշխարհին, մասնավորապես մամուլի միջոցով, որ մենք մշտապես ակտիվորեն դատապարտել ենք թուրքական կառավարության հեռու գնացող միջոցառումները և առավել ևս՝ տեղական մարմինների անօրինությունները»:[90]

• Կոստանդնուպոլսից ավստրոհունգարական տեղեկատու բյուրոն իրենց ռազմածովային բաժնին որպես ի գիտություն հասցեագրված թիվ 274/KD արձանագրությամբ հայտնում է. «...Հայկական հարցը, որը բարձրացել է այստեղի ամերիկյան դեսպանատունը և պիտի քննարկվի, ինչպես երևում է «պաշտպանության տակ վերցնելու» առնչությամբ ավելի սուր ձևեր է ընդունում: Դեսպան Մորգենթաուն հայտարարում է, որ Միացյալ նահանգներն այնքան շատ միսիաներ, դպրոցներ և շահեր է ունեցել հայկական նահանգներում և հօգուտ հայ ժողովրդի պիտի հանդես գան այնպես, որը կարող է հանգեցնել Թուրքիայի հետ դիվանագիտական կապերի խզման, մի բան, որն իհարկե պլատոնական էր լինելու:

Ինչպես ես վստահելի աղբյուրներից իմացել եմ, Մորգենթաուն խորհուրդ է տվել ամերիկյան ընտանիքներին պատրաստ լինել հարկ եղած դեպքում թողնել Կոստանդնուպոլիսը»:[91]

• Հայ ժողովրդի ոչնչացման թուրքական քաղաքականության մասին պետքարտուղար Լանսինգին ուղարկած հեռագրում դեսպան Մորգենթաուն գրում է. «Խաղաղ հայ բնակչության տեղահանությունն ու անկարգությունները շատանում են, և ականատեսների սրտակեղեք հաղորդումներից պարզվում է, որ ապստամբների դեմ պատասխան գործողությունների պատրվակով տեղի է ունենում ցեղի ոչնչացում:

Բողոքներն ու սպառնալիքներն անօգուտ են, որոնք, հավանաբար, օսմանյան կառավարությանը կմղեն ավելի կտրուկ միջոցների, քանի որ վերջինս տրամադրված է մերժելու իր պատասխանատվությունը: Ես կար-

ծում եմ, որ ոչինչ, բացի ուժի կիրառումից, ինչին ԱՄՆ-ը, ակնհայտորեն ի վիճակի չէ, չի կարող անհրաժեշտ ձևով կարգավորել իրավիճակը»:[92]

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմը ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին գրում է, որ ուրիշ աղբյուրներից ստացված տեղեկությունները հաստատել են Յ. Լեփսիուսի հունիսի 18-ին հայտնած տեղեկությունները հայերի զանգվածային ոչնչացման վերաբերյալ և ավելացնում. «Զնայած կրկնվող համառ բողոքներին, Բարձր Դուռը շարունակում է տեղահանել հայերին և աքսորելով անբնակ վայրեր՝ ոչնչացնում նրանց: Մենք չենք կարող Բարձր Դռանը խանգարել այդ գործում և ստիպված ենք նրա (Բարձր Դռան) վրա թողնել միջոցառման տնտեսական և քաղաքական հետևանքների պատասխանատվությունը»:[93]

*17 հուլիսի*

• Դիարբեքիրի նահանգի Մարդին քաղաքից հավաքած կանանց ու երեխաների թուրքերը տանում են դեպի գավառի Արդիլիման գյուղը, որտեղ նրանց թալանում, անպատվում և վերջում՝ կոտորում են, իսկ ջահել կանանց ու աղջիկներին միայն շապիկներով քշում են Սիրիայի և Հիջազի սահմանամերձ Թոֆեյե բնակավայր, որտեղ բոլորին գնդակահարում են:[94]

• Մի օտարերկրացի Կոնիայից գրում է Պոլսում գտնվող իր բարեկամին, որ Զեյթունից Սուլթանիա հասած տարագիրները աղետալի վիճակում են և խնդրում է 50 ոսկի ուղարկել նրանց համար, քանի որ նրանք սովամահ են լինում կամ դաշտերում բույսեր ուտելով՝ թունավորվում: Նամակում նշվում է նաև, որ նախորդ շաբաթ զոհերի թիվը հասել է 305-ի և օրեցօր ավելանում է:[95]

• Հալեպից հյուպատոս Ռյոսլերը Գերմանիայի դեսպանին ու ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին նկարագրում է, թե «...ինչպիսի անմարդկային ձևով են կատարվում թուրքական կառավարության ընդունած հակահայ որոշումները»: Նա գրում է, որ գետերը հայերի դիակներ են բերում, որ Հալեպով անցնող շատ հայ կանայք իրենց փոքր երեխաներին թողնում են՝ նրանց անխուսափելի մահից փրկելու համար, իսկ շատ հղի կանայք էլ ուղեկցող ոստիկանների կոպիտ վերաբերմունքի պատճառով ծննդաբերում են և նորածիններին թողնում ճանապարհին, որ տարագիրների մեջ ամենուրեք տարածված են տարափոխիկ մահացու հիվանդություններ...: Բացի այդ նա նշում է նաև, որ շատ թուրք պաշտոնյաներ ևս պատժվել են՝ իրենց շրջանների հայերի նկատմամբ ցուցաբերած ոչ դաժան վերաբերմունքի պատճառով...:[96]

*18 հուլիսի*

• Թուրքական կանոնավոր բանակի զորամասերը հարձակվում են Սասունի վրա, որի բնակիչները գիտակցելով իրենց սպառնացող ստույգ մահվան վտանգը՝ դիմում են ինքնապաշտպանության: Սակավաթիվ ու սակավազեն սասունցիները երեք օր կարողանում են դիմադրել թնդանոթներով զինված թուրքական զորքերին, հետո բարձրանում են Անդոկ լեռը:[97]

• Իզմիրի Ասլանբեկ գյուղում գիշերով սկսվում են տեղահանություններ:[98]

• Էրզրումից դուրս է գալիս հայերի հինգերորդ և վերջին քարավանը, որը բաղկացած էր 7000 հոգուց: Քարավանի մեծ մասը կոտորվում է Մամախաթունի մոտ, իսկ մյուս կեսը, որ հասնում է Մալաթիա, ոչնչացվում է մոտակա Փըրընջլար կոչված վայրում:[99]

*19 հուլիսի*

• Մորգենթաուի հետ մի տեսակցության ժամանակ Էնվերը նախազգուշացնում է ամերիկյան դեսպանին, որ նա չափավորի իր հայանպաստ գործունեությունը՝ շեշտելով, որ եթե հայերը շարունակեն համագործակցությունը թշնամու հետ, ինչպես արեցին Վանում, կառավարությունը ստիպված կլինի ճզմել նրանց:[100]

• ԱՄՆ-ի պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը՝ պատասխանելով Օտարերկրյա միսիաների լիազորների ամերիկյան խորհրդի քարտուղար Ջեյմս Բարտոնին, հայտնում է. «Պետդեպարտամենտն արել է և շարունակելու է անել այն ամենը, ինչը կարող է հետևողականորեն համոզել թուրքական կառավարությանը՝ թեթևացնելու այդ ազգի ծանր վիճակը: Միաժամանակ պետք է նշել, որ հայերին օգնելու ջանքերն է՛լ ավելի են դժվարանում ելնելով այն փաստից, որ հայերի հոծ զանգվածներ կառավարության դեմ զինված ապստամբության մեջ են, և թուրքական կառավարությունը հայտարարում է, թե իր կողմից ձեռնարկված միջոցներն այնպիսին են, ինչպիսիք անհրաժեշտ են այդ ազգից պաշտպանվելու համար»:[101]

• Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը՝ Պետդումային ուղղված դիմումում գրում է. «...Կանխազգալով մոտեցող ամպրոպը՝ թուրքերը հատուկ դաժանությամբ նետվեցին դեռևս իրենց իշխանության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների վրա: Հայերը ենթարկվում են չլսված հալածանքների, որոնք չկոտրեցին նրանց ոգին, և հայերի ջոկատները մարտնչում էին մեզ հետ միասին՝ իրենց ճնշողների դեմ: Այսպես, Վանում նրանք մոտ մի ամիս կարողացան դիմակայել թուրքերի ճնշմանը՝ մինչև մեր զորքերն ազատագրեցին նրանց»:[102]

*20 հուլիսի*

• Տրապիզոնի ավստրոհունգարական հյուպատոս Էռնեստ Կվյատկովսկին արտաքին գործերի նախարար Բուրիանին գրած թիվ 42/բ. տեղեկագրում նշում է. «...Այսօր, բացի որոշ թվով երեխաներից, որոնք բաժանվել են այստեղի և ծովափնյա շրջանների մահմեդական ընտանիքների միջև, ինչպես նաև բացի որոշ հովանավորյալներից, ծանր հիվանդներից և սակավաթիվ ծառայողներից, հայերը հարկադրված թողել են քաղաքն ու նահանգը: Մեծամասնությունը հեռացել է ցամաքային ճանապարհով, ուղղվել դեպի Մոսուլի նահանգ, մի չնչին մաս էլ՝ հետագա անորոշ ճակատագրով Սամսուն պիտի ուղարկվեն: Ճանապարհի դժվարության, անհրաժեշտ նախազգուշական միջոցների բացակայության պայմաններում, հատկապես քրդական շրջաններում սպառնացող վտանգներից միայն քչերը կհասնեն նպատակակետին և այսպիսով ակնհայտորեն, ըստ նախկին ռուսական դեղատոմսի՝ «Հայաստանն առանց հայերի»՝ կլուծվի Հայկական հարցը... Պիտի պատմության խորքերը վերադառնալ, որպեսզի մի ժողովրդի այսպես ոչնչացնելու բռնարարքներ հայտնաբերվեն»:[103]

• Տրապիզոնից Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Կվյատկովսկին արտաքին գործերի նախարար Ստեփան Բուրիանին հղած իր հաջորդ, թվով 43/բ. հաղորդագրությամբ հայտնում է, որ Սամսոն քաղաքի իրենց հյուպատոսական ծառայության հաղորդման համաձայն «...հայերը Սամսոնից, սակավ բացառությամբ, այս ամսվա սկզբին դեպի Միջագետք են աքսորվել: Մի քանի հարյուր հոգի էլ, նրանց թվում նաև կաթոլիկներ, փորձել են իսլամ ընդունել...»:[104]

• Հանդես գալով Ռուսաստանի Պետդումայում արտաքին գործերի

նախարար Սազոնովի կատարած հայտարարության առիթով, պատգամավոր Պապաջանովն ասել է. «…Ես՝ որպես Պետական Դումայում հայ բնակչության ներկայացուցիչ, իմ պարտքն եմ համարում վկայել հայ ժողովրդի բարձր հայրենասիրական զգացմունքների և նրա այն տրամադրվածության մասին, որ մեր ընդհանուր հայրենիքի համար նա ոչ մի զոհողության առաջ կանգ չի առնի…

Թուրքիայի այսօրվա ղեկավարները՝ «Կարմիր սուլթանի» հայ ժողովրդի նկատմամբ վարած քաղաքականության փորձված հետևորդները, նրան դիտում են որպես Թուրքիայի համար վնասակար, Ռուսաստանի համար օգտակար տարր և հետևողականորեն կիրառում են Թուրքահայաստանի ֆիզիկական ոչնչացման գաղափարը: Դա կատարվում է հեշտությամբ, քանի որ Թուրքահայաստանը դարձել է ռազմական գործողությունների թատերաբեմ, որտեղ և հարևան նահանգներում միասին ապրում են մոտ 3000000 հայեր: Եվ թշնամու յուրաքանչյուր նահանջի և մեր հարձակման, կամ էլ հակառակ դեպքում, անպայմանորեն տեղի էր ունենում հայ և, ընդհանրապես, քրիստոնյա բնակչության ջարդ ու թալան: Իսկ այն, ինչ տեղի էր ունենում թուրքական զորքերի կողմից գրավված տարածքներում, անհնարին է նկարագրել: Թուրքական իշխանությունների և նրանց ներկայացուցիչների քրիստոնյա և, հատկապես, հայ բնակչության նկատմամբ վարած գազանությունները մարդկային երևակայությունից դուրս են: Ուրմիայում, օրինակ, կոտորել են մի բնակավայրի ողջ բնակչությանը՝ առանց սեռը և տարիքը հաշվի առնելու, մինչև կրծքի երեխաները ներառյալ: Տանզար բնակավայրում սվինահարել և ժայռերից գցել են բոլոր տղամարդկանց, բացառությամբ մի քանի փախածների: Վանի նահանգում, ինչպես կարողացանք պարզել, սրի են քաշվել ավելի քան տաս հազար խաղաղ բնակիչների: Այսպիսի տեղեկություններ են ստացվել նաև Մուշից, Բիթլիսից, Էրզրումից և շատ ուրիշ տեղերից…»:[105]

*21 հուլիսի*

• Պողոս Նուբարը տեղեկացնում է բուլղարահայերի առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանին, որ նրանից ստացված հունիսի 24-ի թվագրությամբ հայերի ծանր վիճակի մասին տեղեկագիրը ներկայացրել է ԱՄՆ-ի նախագահին և Իտալիայի թագավորին, որոնք, սակայն, չէին կարողացել Բարձր Դռան մոտ հայերին ի նպաստ որևէ արդյունքի հասնել: Բացի այդ, տեղեկագիրը ներկայացվել է նաև անգլիական, ֆրանսիական և ռուսական իշխանություններին:[106]

• Սասունի պաշտպանության ղեկավարները ռազմամթերքի սպառվելուց հետո բոլոր հայերին հրամայում են իրենց ընտանիքներով քաշվել Անդոկի դաշտ, որտեղ հավաքվել էին արդեն շուրջ 50000 հոգի: Եվ ժողովուրդը խմբերի բաժանվելով լեռնային դժվարանցանելի ճանապարհներով շարժվում է առաջ: Սակայն հետագայում նրանք մահանում են կամ սովից կամ էլ զոհ են գնում քրդերին ու թուրքերին:[107]

• Անկարայի կուսակալ Աթըֆ բեյը ծածկագիր հեռագրով հրամայում է Յոզղաթի գավառապետ Ջեմալ բեյին. «Այն հայերը, որոնք վարչական և

---

* Ավստրիացի դիվանագետը սեփական կառավարության անտարբեր քաղաքականությունը հայերի զանգվածային բնաջնջման հարցում փորձում է արդարացնել Ռուսաստանի՝ 1895-1896թթ. արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկու «Հայաստանը մեզ պետք է առանց հայերի» արտահայտությամբ:

քաղաքապետական խորհուրդների անդամ են և աքսորի ենթակա չեն, պետք է շարունակեն իրենց աշխատանքը: Իսկ ուրիշ հանձնախմբերում ընդգրկված հայերի պաշտոններին վերջ տվեք»:[108]

• Գերմանական-լեվանդական բամբակագործական ընկերությունը Ադանայի իրենց հյուպատոսությանը հղած զեկուցագրում նշում է. «Թուրքիայի կառավարությունը մտադիր է՝ ներքաղաքական դրդապատճառներից ելնելով, Ադանայի նահանգից աքսորել բոլոր հայերին:

Տեղահանությունը պետք է կատարվի նրանց շարժական և անշարժ գույքի օտարումով: Թուրքիական կառավարությունն իրեն իրավունք է վերապահում հարմար միջոցներով իրացնել օտարված գույքը և դրանից ստացված միջոցներով առաջին հերթին մարել սեփական, երկրորդ հերթին՝ արտասահմանյան պարտքերը, իսկ մնացորդը տրամադրել տեղահանվածներին:

Միաժամանակ միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի հայերի համար անհնարին լինի գույքի օտարում կամ փոխանցում որևէ մեկին…»:[109]

• Մոսուլից գերմանական հյուպատոս Հոլշտայնը իրենց դեսպանատանը զեկուցում է. «Մինչև հիմա այստեղ են հասել վեց հարյուր կանայք և երեխաներ (հայ, քաղկեդոնացի, ասորի), որոնց արական սեռի հարազատները կոտորվել են Սղերդում, Մարդինում և Փեյշղաբուրում (*): Մոտ օրերս սպասվում է նույնքան մարդկանց ժամանում:

Այս մարդկանց թշվառությունն անհնար է նկարագրել, շորերը նեխել են մարմնի վրա, ամեն օր քաղցից մեռնում են շատ կանայք և երեխաներ:

Նրանց տրամադրված միջոցներից այստեղի ղեկավարությունը չի կարող թշվառների համար անգամ հաց գնել…»:[110]

*22 հուլիսի*

• Թալեաթը հրահանգում է թուրքերին և քրդերին հեռու մնալ հայերի թողած և թողնելիք գույքերի նկատմամբ ոտնձգություններից՝ սպառնալով հատկապես այն պաշտոնյաներին, որոնք «իրենց հետաձգված աշխատավարձի փոխարեն կամ էլ որոշակի մի գումարով» կփորձեն վաճառել հայերի թողած գույքը:[111]

• Անգորայի նահանգի Բողազլյան գյուղաքաղաքի զորամասի հրամանատար Մուստաֆա բեյը թիվ 17 ծածկագիր հեռագրով հաղորդում է Անկարայի հինգերորդ զորաբանակի հրամանատարին, որ գյուղերից և գյուղաքաղաքից ծերբակալված հայերը «...կասկածելի լինելու պատճառով, տասնապետ Հուսեյն Ավնիի գլխավորությամբ ջարդվեցին»:[112]

*23 հուլիսի*

• Կեսարիայում 15-րդ զորամասի հրամանատար Շեհաբեդդին բեյը ծածկագիր հեռագրով զեկուցում է Անկարայի բանակի հրամանատարությանը, որ «...Բողազլյանի գայմագամի հրամանով մինչև հիմա Բողազլյանի և շրջակա գյուղերի հայերից 3660 հոգի կոտորվել են…»:[113]

• Բրուսա ուղարկած մի հեռագրով Թալեաթը հրահանգում է. «Նահանգներում գտնվող հայերը պետք է տեղափոխվեն նախապես որոշված վայրերը: Կաթոլիկները պետք է զերծ մնան տեղափոխությունից»:[114]

*24 հուլիսի*

• Իզմիրի նահանգում սկսվում և մինչև հուլիսի 27-ը շարունակվում են տեղահանությունները:[115]

• Կոստանդնուպոլսից Բուլղարիայի դեսպան Կոլուշևը նախարարների խորհրդի նախագահ դոկտոր Ռադոսլավովին հայտնում է. «Մխիթարյան միաբանությունից երկու հայազգի վանականներ իրեն հանձնեցին Փոքր Ասիայի հայերի ծանր դրության մասին հետևյալ տեղեկությունները և խնդրեցին միջոցներ ձեռք առնել նրանց վիճակը թեթևացնելու համար:

Նրանք հիմնականում հայտնեցին.

Էրզրումում 1500 հայ ընտանիք դուրս են բերվել քաղաքից ու մինչև վերջինը մորթվել: Սվազում հայերը վտարվել են քաղաքից և տեղափոխվել անհայտ ուղղությամբ: Մարդինում մորթել են հայրապետին ու 700 հայի: Շապին-Գարահիսարը ռմբակոծվել է և ոչնչացվել: Այնտեղի հայերը պաշտպանվել են թուրքերից խլած զենքով: Սամսոնում, Ինեպոլում, Ունիեում հայերի մեծ մասը թրքացել են՝ կոտորածից փրկվելու համար: Մերսինում 150 ընտանիք աքսորվել է, նույնը նաև շրջակա քաղաքներից»:

Հրամայվել է Իզմիրի մոտի Բախչեջիկը ևս դատարկել: Ոչ մի ռումբ չի հայտնաբերվել: Բնակչությունը խոշտանգվել է Կոստանդնուպոլսի բանտի տնօրեն Իբրահիմ բեյի կողմից...

Տրապիզոնի բոլոր հայերը տեղահանվել են... Տեղահանված ու հալածված հայերից ոչ մեկը նշանակված վայրը չի հասել: Հավանական է, որ ճանապարհին բոլորին մորթել են»:[116]

• Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսը դեսպան Մորգենթաուին գրում է. «Գաղտնիք չէ, որ հատուկ ծրագրով նախատեսված է բնաջնջել հայերին որպես ազգ, որն այնպիսի սառնասրտությամբ, բարբարոսությամբ ու արդյունավետությամբ էր իրագործվում, որ գլխի չէինք ընկնում, թե ինչ է կատարվում: Բազմաթիվ անգամ հաստատվեց, որ տեղահանված ոչ մի տղամարդ չի փրկվել: Միաժամանակ կանխամտածված ձևով սպանել են նաև բազմաթիվ կանանց ու երեխաների: Առավել գեղեցիկ կանանց տարել են հարեմները:

Ես չեմ կարծում, որ համաշխարհային պատմության մեջ երբևէ իրագործվել է ավելի համընդհանուր և արմատական նախճիր... ոչ էլ հավատում եմ, որ մարդկային ուղեղն ի զորու է հղանալ ավելի ահավոր ու սադայելական ծրագիր...

Կասկած չկա, որ ամեն ինչ նախապատրաստված էր ամիսներ առաջ: Նախ կալանավորեցին մարդկանց, որոնց մեղադրեցին հեղափոխական դավադրություն հրահրելու մեջ և ենթարկեցին ահավոր տանջանքների՝ մինչև որ կեղծ խոստումներ կորզեցին... Զենքը կառավարությանը հանձնելու հրամանի պատրվակով մարդկանց այնքան էին տանջում, մինչև ընդունեին, որ թաքցրած զենք են ունեցել, երբ իրականում ոչինչ չեն ունեցել: Հայերն առասպելական գներով թուրքերից զենք էին գնում, տալիս ոստիկանությանը... Հարյուրավոր մարդկանց բանտարկեցին, հետո քաղաքից հանեցին և բոլորին սպանեցին: Հավաքեցին և ճանապարհ կառուցելու պատրվակով տարան նաև հազարավոր հայ զինվորների և կոտորեցին... Ի վերջո, երբ բոլոր տղամարդկանց վերացրել էին, զենքերը հավաքել, հայտարարեցին, որ մնացած հայերը պիտի տարագրվեն... Անհնարին է ասել, թե քանի հայ է սպանվել, բայց ենթադրվում է, որ ընդհանուր թիվը հասնում է մեկ միլիոնի...»:[117]

• Աղանայից գերմանական հյուպատոս Բյուգեն դեսպան Վանգենհայմին գրում է, որ նահանգից հայերի տեղահանության պատճառով գերմանական ֆիրմաների կրած վնասը կազմում է 60000 թուրքական լիրա և էլի շարունակելու է աճել:

Հյուպատոսն իր տեղեկագրում նշում է նաև, որ Ադանայում հայերի լրտեսական կազմակերպությունների գոյությունը համարում է դատարկ պատրվակ: «Այստեղ գոյություն չունեին նաև ո՛չ գաղտնի հեղափոխական միություններ, ո՛չ էլ դրա նման մի բան: Առանձին դեպքերում հայերի մոտ զենք գտնվել է, ինչը նրանց դեմ առաջ է քաշվում որպես մեղադրելու համար հիմք: Մահմեդականների մոտ, անշուշտ, կգտնվեր արգելված զենքի լրիվ այլ քանակություն, որը, անշուշտ, չէին ցանկանա ոչ մի դեպքում առգրավել, որպեսզի չզրկեն նրանց կոտորածի համար անհրաժեշտ «ձեռքի գործիքից»:

Ընդհանրապես Ադանայի հայերի մասին պետք է ասել, որ նրանք, ի նկատի ունենալով այն դաժան վերաբերմունքը, որին նրանք պարբերաբար ենթարկվել են ու այժմ էլ ենթարկվում են, ցուցաբերում են բավականին օրինապահ տրամադրվածություն: Պահանջել նրանցից ավելին՝ անարդարացի կլիներ...»:[118]

*25 հուլիսի*

• Թուրքական բանակի գլխավոր շտաբից գերմանացի զորավար Դյորթիոմը Անկարայի հինգերորդ բանակի հրամանատար Խալիլ Ռեջայի բեյին ծածկագիր հեռագրով հայտնում է. «Որոշվել է հայերին տեղափոխել երկրի խորքերը: Ի նկատի ունենալով այս պարագան, խնդրվում է անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, որ քեզ ենթակա աշխատավորական գնդերի հայ զինվորները չկարողանան կարգն ու կանոնը խանգարել...»: Միանգամայն պարզ էր, թե ինչ միջոցառումների մասին էր խոսքը:[119]

• Թուրքերն ու քրդերը պաշարում են Մուշի գավառի Ցրոնք գյուղը, թալանում այն, հավաքում ու պղծում 8 տարեկանից բարձր աղջիկներին, ապա, ինչպես նշում է այս դեպքերի ականատեսը, այրում են այն մարագը, որտեղ հավաքել ու փակել էին գյուղի տղամարդկանց, հետո պատռում են մի հղի կնոջ արգանդն ու հանելով երեխային՝ պատե-պատ խփում...:[120]

• Մի գաղտնի նամակով Թալեաթը պետական իշխանություններից պահանջում է պատրաստել վիճակագրություն, որտեղ պետք է արտացոլվեին տեղահանված հայերի թիվը, բնակության վայրերը, հայերի թողած կալվածքները, հողերի տեսակը, քանակը և արժեքը:[121]

*26 հուլիսի*

• Անգորայի նահանգի Կեսարիա քաղաքում և նրա գավառում հայտարարվում է, որ սկսվում է հայ բնակչության տեղահանությունը: Տարագիրների առաջին քարավանը դուրս է գալիս հայտարարությունից տասն օր անց:[122]

• Անգորայի նահանգի Յոզղաթ քաղաքից դուրս է գալիս 472 մարդուց կազմված հայերի առաջին քարավանը, որոնց թվում էր հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Դանիելյանը, քահանաներ, ուսուցիչներ, առևտրականներ և անվանի շատ հայեր:[123]

• Ադանայի նահանգի Մերսին քաղաքից ամերիկյան հյուպատոս Էդուարդ Նաթանը դեսպան Մորգենթաուին ուղարկած տեղեկագրում նշում է. «Ադանա, Տարսոն և Մերսին քաղաքներում հայերի ակնհայտորեն մեծամասշտաբ տեղահանման միջոցառումներ են անցկացվում: Ադանայում ավելի քան երկու հարյուր հիսուն ընտանիքների հրամայվել է պատրաստ լինել հեռանալու: Տարսոնից մի քանի ընտանիքներ արդեն տեղահանվել են, շատերին էլ հրամայվել է կարճ ժամկետում պատրաստ լինել մեկնելու,

նրանց ամբողջ գույքը հանձնվում է տեղական իշխանություններին...

Մերսինում նշվել են մոտ երկու հարյուր ընտանիքներ, որոնք շուտով պետք է արտաքսվեն: Սրանց մեծ մասը աղքատ խավերից են, սակայն ինձ տեղեկացրել են, որ այս հրամանը վերաբերում է Մերսինի ամբողջ հայ բնակչությանը, և այն աստիճանաբար կիրագործվի: Տեղահանման հատուկ հանձնաժողովի անդամներից մեկն այստեղ է, որպեսզի վերահսկի այդ գործը, իսկ հանձնաժողովի նախագահը գնաց Հաճն, որպեսզի այնտեղ ավարտի տեղահանումը...»:

Բացի այդ, հյուպատոսը նշում է նաև, որ հայերի տեղահանումով անպայման կվատանա տեղի տնտեսական վիճակը, մեծապես կտուժեն հատկապես գերմանական առևտրական, ֆինանսական և գյուղատնտեսական կազմակերպությունները, ինչպես նաև Զինգեր մանուֆակտուրան և նավթային ընկերությունները:[124]

• Հալեպից գերմանական հյուպատոս Ռյոսլերը հուլիսի 31-ին դեսպան Հոհենլոհեին ուղարկած տեղեկագրի տողատակին նշում է, որ հուլիսի 26-ին Ուրֆայից ստացել է գերմանական մերձավորարևելյան միսիայի մի համառոտ հաղորդագրություն՝ իրենց մոտով անցնող տարագրված հայերի մասին, որտեղ ասվում է. «Վիճակն այստեղ աննկարագրելիորեն ողբերգական է. հյուսիսից գալիս են ու անցնում միայն կանայք ու երեխաներ, ինչը մահվան դատապարտելու մի նոր, հավանաբար լրիվ ոչնչացման մեթոդ է»:[125]

*27 հուլիսի*

• Սկսվում են տարագրություններն ու ջարդերը Անկարայի շրջակայքի Էթանոս Քեսկին և ուրիշ հայկական գյուղերում:[126]

• Տարագրվում են Հալեպի նահանգի Անտիոք քաղաքի ու շրջակայքի հայերը:[127]

• Հալեպից գերմանական հյուպատոս Ռյոսլերը հեռագրում է իրենց դեսպանատուն. «Արևելքում հայերի ջարդերի մասին այստեղ հասած հավաստի լուրերը սահմռկեցուցիչ են: Կրկին և ավելի մեծ չափերով դիակներ են քշվում Եփրատն ի վար, այս անգամ՝ հիմնականում կանանց և երեխաների...»:[128]

• Հալեպից գերմանական հյուպատոս Ռյոսլերի՝ ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին ուղարկած 10 կետերից կազմված զաղտնի զեկուցագրում նշում է. «...Ավելի ակնհայտ է դառնում, որ կառավարությունը՝ դիտմամբ կամ ակամա, թույլ է տալիս, որ իր ընդունած միջոցառումների իրականացումն անցնի ուրիշի ձեռք և վերածվի հայերի կոտորածի, որը և, ինչպես երևում է, դառնում է քրդերի և չերքեզների գործը:

Բոլորովին վերջերս Խարբերդից, Էրզրումից և Բիթլիսից Ռաս-ուլ-Այն հասան հայեր: Խարբերդից եկած հայերը պատմում են, որ քաղաքից մի քանի ժամ հեռավորության վրա գտնվող մի գյուղի տղամարդկանց առանձնացրեցին կանանցից, սպանեցին և նրանց դիակները շպրտեցին ճանապարհի երկու կողմում, որտեղով պետք է անցնեին կանայք: Մարդինից Ռաս-ուլ-Այն ճանապարհին բեդվինները հափշտակեցին տարան կանանց ու աղջիկների մի ամբողջ խմբի: Նրանք պարզապես աքսորախմբերից ուժով տանում էին նրանց, ովքեր իրենց դուր էին գալիս...

Իմ նախորդ հեռագրերն ու գրավոր զեկուցագրերը պետք է ցույց տային, որ թուրքական կառավարությունն իր անվտանգության արդարացի միջոցառումներից շատ հեռու է գնացել՝ հայերի հնարավոր կամ իրական

քայքայիչ գործողություններից պաշտպանվելու նպատակով իր բացառապես դաժան ու լկտի հրամանների պարտադիր կատարումը տարածելով կանանց ու երեխաների վրա: Կառավարությունը գիտակցաբար ձգտում է հասնել հայ ժողովրդի որքան հնարավոր է մեծ մասի ոչնչացմանը՝ օգտագործելով այդ նպատակի համար այնպիսի մեթոդներ, որոնք վերցված են շատ հին ժամանակներից և որոնք արժանի չեն մի կառավարության, որն ուզում է մնալ Գերմանիայի դաշնակիցը: Քանի դեռ թուրքական կառավարությունը պատերազմի մեջ է Անտանտի հետ և քանի դեռ նրա գերմանացի դաշնակիցը հարմար չի համարում այս պահին առարկել նրան, կառավարությունը ձգտում է, և դրանում կասկած չկա, օգտվել ստեղծված առիթից և ընդմիշտ ազատվել Հայկական հարցից՝ թողնելով միայն մի քանի հայկական մեկուսացված համայնքներ: Եվ մի քանի մեղավորների հետ զոհ գնացին հսկայական քանակությամբ անմեղ մարդիկ...

Միայն Մարաշի գավառից և Ադանայից թուրքական կառավարությունն իր բազմահազար հայ հպատակներին, նկատի առեք, միայն անմեղ մարդկանց, քշել է անապատներ (մինչև հուլիսի կեսերը՝ ավելի քան 30000 մարդ և տեղահանության շրջաններն ավելի են լայնանում): Դա կատարվում է ռազմական գործողությունների շրջանից տեղափոխելու անհրաժեշտության պատրվակով և վերաբերում է առանց բացառության բոլորին՝ չխնայելով ոչ հիվանդներին, ոչ հղիներին և ոչ էլ զինծառայողների ընտանիքներին՝ առանց նրանց անհրաժեշտ քանակությամբ ջուր և սնունդ հատկացնելու: Կառավարությունը նաև ոչինչ չի արել, որպեսզի կանխի տեղահանվածների շրջանում համաճարակները, որոնք բռնկվեցին և կանանց հասցրին այն աստիճանի հուսահատության, որ նրանք իրենց փոքր երեխաներին ու նորածիններին թողնում էին ճանապարհի եզրին, վաճառում չափահաս աղջիկներին կամ հուսահատորեն իրենց փոքրիկներին գրկած գցվում էին գետը... Տղամարդկանց առանց որևէ պատճառի գնդակահարում էին ամայի վայրերում և նրանց դիակները թողնում շներին և վայրի թռչուններին: Կառավարությունը, ինչպես կարծում են, կազմակերպել է բոլոր աքսորվածների սպանությունը, որի համար բանտերից ազատել է հանցագործներին, նրանց հագցրել զինվորական համազգեստ և ուղարկել է այն շրջանները, որտեղով պետք է անցնեն տեղահանվածները: Նա կազմակերպել է նաև չերքեզների կամավորական խմբեր և ուղարկել հայերի դեմ: Եվ ի՞նչ է առաջարկում, որպես կիսապաշտոնական բացատրություն. «Օսմանյան կառավարությունը մեծահոգաբար իր պաշտպանության տակ է առնում Թուրքիայում ապրող բոլոր ազնիվ քրիստոնյաներին...»:

Ես չկարողացա հավատալ իմ աչքերին, երբ տեսա այդ բացատրությունը և խոսք չեմ գտնում ասելու, թե որքան մեծ է այդ սուտը: Թուրքական կառավարությունը չի կարող իրենից հանել այն ամենի պատասխանատվությունը, ինչ որ կատարվում է... Ի վերջո, կառավարությունն իրոք կանխամտածված կերպով ուղարկեց տեղահանվածներին այդ քաոսի մեջ... Այն բանի նման, ինչպես հայերի ոչնչացումն այս երկրում ընկալվում է որպես արդյունք գերմանացիների դրդման, թուրքական կառավարությունը ձգտում է, օգտվելով մեր ներկայությունից, ծածկել իր արարքները եվրոպական հասարակությունից: Ես կուզեի խորհուրդ տալ Ձերդ գերազանցությանը մտածել, թե արժե՞ արդյոք գերմանական մամուլում տպագրել թուրքերի բացատրությունները Հայկական հարցի մասին և վտանգ չկա՞ արդյոք, որ մեր դաշնակիցները կհիասթափվեն մեզանից»:[124]

*28 հուլիսի*

• Հռոմի Բենեդիկտոս XV պապը հայկական ողբերգության առաջին ահազանգից հետո դիմում է պատերազմող երկրներին և դատապարտելով բնակչական ամեն մի արարք ու մտահոգ վտանգված ժողովուրդների ճակատագրով՝ հիշեցնում է, որ պետք է նրանց իրավունքներն ու ձգտումները կարգավորվեն ոչ թե «...կտրուկ սրով, այլ իրավախոհության և արդարության ոգով», իսկ անհամաձայնությունները՝ հանդարտությամբ, արդարամտորեն:[130]

• Սկսվում են տեղահանությունները Հալեպի նահանգի Այնթապ, Բեհեսնի, Քիլիս և Ադիաման բնակավայրերում:[131]

• Ռուսական բանակը վանեցիների գաղթից 10 օր անց թողնում Վանը, և թուրքերը վերագրավում այն, սակայն մի փոքր նահանջից հետո ռուսները կանգ են առնում և, երբ վտանգը համարում են անցած, նորից մտնում են Վան:[132]

• Ուրֆա քաղաքի բոլոր անվանի հայերին՝ մտավորականներին, կառավարական պաշտոնյաներին ու նաև ձերբակալվածներին թուրքերը տանում են քաղաքից երկու ժամ հեռավորության վրա գտնվող Շեյթանֆերեսի կոչվող ձոր և գնդակահարում:[133]

• Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օսկար Հեյզերը դեսպան Մորգենթաուին ուղարկած տեղեկագրում՝ վկայակոչելով տեղի հայերի տեղահանության սարսափելի մանրամասնությունները, գրում է, որ համաձայն մի ականատեսի թուրքերը մի երեխայի սպանեցին՝ գլուխը ժայռին խփելով, և, որ «...վերջերս բազմաթիվ կանանց ու երեխաների դիակներ են ափ շպրտվել Տրապիզոնի իտալական եկեղեցու պատերի տակ, և հույն կանայք դրանք թաղում էին ավազների մեջ, այնտեղ, որտեղ գտնվել են, իսկ մի թուրք պարոն, որ Տրապիզոնում կառավարական պաշտոնյա է, բավական անկեղծորեն և շատ հուզված իր անհանգստությունն է արտահայտել փոխհյուպատոսին՝ Տրապիզոնի հայերի նկատմամբ ցուցաբերվող սարսափելի անմարդկային վերաբերմունքի մասին»: Իսկ մի թուրք երիտասարդ, որը ծառայում էր «Ինշահատ թաբուրի»-ում (շինարարական գնդում) և աշխատում Գյումիշխանե տանող ճանապարհին հյուպատոսին ասաց, որ «15 օր առաջ բոլոր հայերը, թվով 180 հոգի, առանձնացվեցին մյուս աշխատողներից, ճամբարից հեռացվեցին և գնդակահարվեցին»:[134]

• Թալեաթը տեղեկացնում է համապատասխան իշխանություններին, որ հայերի լքված և լքվելիք գույքերի ու նրանց ունեցած պարտքերի հարցերը պետք է լուծվեն մի նոր, արդեն պատրաստի կանոնագրով:[135]

• Թալեաթը մի այլ կանոնագրով կարգավորում է հայերի թողած գույքերի հանձնախմբին կից ստեղծված Բալկաններից եկած թուրք գաղթականների և քոչվոր ցեղերի տեղավորման հանձնաժողովի գործունեության, պարտականությունների ու իրավասության սահմանները:[136]

• Աթենքում Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության դեսպանորդ Դեմիդովի օգոստոսի 11-ի հաղորդման համաձայն «...Դեուդեսը հուլիսի 28-ին հայտնել է, որ Թուրքիայում հայերի հետապնդումները ավելի են ուժեղանում: Կոստանդնուպոլսի մոտ գտնվող քաղաքների ու բնակավայրերի հայ բնակչությունը տեղափոխվում է Փոքր Ասիայի խորքերը: Նույն ճակատագիրն է սպասվում նաև մյուս հայերին՝ առանց հպատակությունը հաշվի առնելու»:[137]

• Կարինից գերմանական հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը դեսպան Հոհենլոհեին գրում է, որ մինչ այդ Էրզրումում, ի տարբերություն մյուս

քաղաքների, համեմատաբար մեղմ էին վերաբերվում արտաքսված հայերին, սակայն դրան վերջ տրվեց երիտթուրքական կոմիտեի ազդեցության պատճառով: «Հիմա էլ Մահմուդ Քամիլ փաշան (բանակի հրամանատարը) հրահանգ է տվել անհապաղ և անխնա ձևով արտաքսել բոլոր հայերին:

Քաղաքում մնացած կանանցից և հիվանդներից ետ են վերցրել մնալու թույլտվության ստացականները, և նրանք աքսորվել են դեպի ստույգ մահ… Այս խիստ ուղղության կողմնակիցները բացահայտորեն ընդունում են, որ հայերի դեմ կատարվող գործողությունների վերջնական նպատակը նրանց լրիվ ոչնչացումն է Թուրքիայում: «Պատերազմից հետո Թուրքիայում այլևս հայեր չեն լինի»,- բառացիորեն ասել է մի թուրք հեղինակավոր անձնավորություն:

Սակայն, քանի որ այս նպատակին հնարավոր չէ հասնել միայն կոտորածներով, այստեղ համոզված են, որ մինչև Միջագետք ընկած երկար ճանապարհներն ու զրկանքներն ամեն ինչ ավարտին կհասցնեն: Հայկական հարցի «լուծման» այս մեթոդն իդեալական է համարվում ծայրահեղականների համար, որոնցից են կուսակցական ու զինվորական համարյա բոլոր պաշտոնյաները: Իսկ թուրք ժողովուրդը համաձայն չէ Հայկական հարցի այսպիսի լուծման հետ և արդեն նեղվում է տնտեսական ծանր կարիքից, որն առաջացել է հայերի աքսորի հետևանքով»:[138]

• Անգլիայի պատերազմական խորհրդի նախագահ մարկիզ Գրյուն՝ լորդերի պալատում պատասխանելով լորդ Ջեյմս Բրայսի՝ Հայաստանում թուրքերի կողմից քրիստոնյաների սպանության վերաբերյալ հարցին, ասում է. «...Ֆորին Օֆիսի ստացած տեղեկության համաձայն այս ոճրագործությունները վերջերս աճել են և՛ թվաքանակով, և՛ վայրագության աստիճանով: Դրանք ներառում են և՛ զանգվածային կոտորածը, և՛ բռնագաղթը, որոնք իրագործվել են հարկադրված վերաբնակեցման պատրվակով... այդպիսի վայրագությունների զսպման համար անհնար է անհապաղ քայլերի դիմելը, բայց նրանք, ովքեր պատասխանատու են դրանց համար, վերջին հաշվով կստանան արդար պատիժ…»:

Շարունակելով իր խոսքը՝ նա նշում է, որ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի մայիսի 24-ի համատեղ հայտարարությունից հետո «հանցագործություններն աճել են քանակությամբ և հավանաբար վայրագությամբ: Զանգվածային կոտորածն ու բռնագաղթը իրականացվել է որոշ շրջանների վերաբնակեցման անհրաժեշտության պատրվակով: Ճշմարիտ է նաև այն, որ հանցագործություններին չեն առարկել գերմանացի պաշտոնյաները, որոնց ներկայությունն ու ազդեցությունը կարող էին մեղմացնել ժողովրդի տառապանքները, բայց դարձել են նզովք: Այս պաշտոնյաները ցուցաբերել են ցինիկ անտարբերություն այդ երկրի ու նրա բնակիչների նկատմամբ…»:[139]

• Թիֆլիսի «Кавказ» թերթը հուլիսի 28-ին գրում է. «Ամենայն հայոց կաթողիկոսը դիմել է Թուրքիայի հայերի օգնության Թիֆլիսի վաճառականների կոմիտեի նախագահ Միլովին՝ նշելով, որ Կարսից ու Մուշից հայերը փախչում են զանգվածաբար՝ հիմնականում կանայք ու երեխաներ, և խնդրում է օգնել սոված ու հյուծված փախստականներին: Հուլիսի 15-ին Բերկրի-Կալա՝ են հասել և գնացել դեպի Իգդիր և Էջմիածին: Նրանք 50000 հոգի են: Մուշի գավառում համարյա բոլոր տղամարդիկ կոտորվել են…»:[140]

*29 հուլիսի*

• Թալեաթը հեռագրում է պատկան իշխանություններին, որ թուրք

գաղթականների բաշխման կենտրոններ են ընտրված Անկարան և Կոնիան, որտեղից էլ նրանք պետք է ուղարկվեն Ադանա, Տիգրանակերտ, Սեբաստիա և Խարբերդ:[141]

• Զմյուռնիայից Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Գերենտն արտաքին գործերի նախարար Ստեփան Բուրիանին գրում է, թե իրեն անհայտ են այն պատճառները, որոնք դրդել են թուրքական կառավարությանը տեղի հայերի դեմ այսչափ դաժան գործել:

«Այն ռումբերի համար, որոնք սրանից վեց տարի առաջ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի համաձայնությամբ պատրաստվել, այնուհետև մոռացության են մատնվել և ամբողջապես ոչ պիտանի են դարձել, մահապատիժ է սահմանվում: Բացի այդ, ս/թ. մայիսի 1-ին հրապարակված մի օրենք հետադարձ ուժ ունի, այսինքն՝ կարող է կիրառվել դրանից մի ամիս առաջ գործած հանցագործության նկատմամբ:

Հարց է առաջանում, արդյո՞ք թուրքական կառավարությունը ավելի լավ չէր անի, եթե այսքան անողորմ գործելակերպի փոխարեն՝ ավելի մեղմ ու զգասիրտ վերաբերմունքով հայերի համակրանքը շահեր, ոչ թե ուրիշ գործողություններով նրանց ատելությունը վաստակեր»:[142]

• Տրապիզոնից ամերիկյան հյուպատոս Հեյզերը պետքարտուղարին գրած նամակում նշում է, որ հյուպատոսական գործակալի՝ Սամսոնից հայտնած տեղեկության համաձայն 5000 հայեր արդեն տեղահանվել են, որոնցից շատերը սպանվել են ճանապարհին, և 150 ընտանիքներ էլ կրոնափոխ են եղել:[143]

• ԱՄՆ-ի պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը դեսպան Մորգենթաուին հեռագրով հայտնում է, որ դեպարտամենտը հավանություն է տալիս նրա գործունեությանը՝ ուղղված ներքին գործերի և ռազմական նախարարներից հայերի հալածանքների դադարեցումը հայցելուն և այս հարցում Գերմանիայի և Ավստրիայի դեսպանների աջակցությունը շահելուն:[144]

• Զմյուռնիայից ամերիկյան հյուպատոս Հորթոնը դեսպան Մորգենթաուին թիվ 800 GH/GR «խիստ գաղտնի» հեռագրով հայտնում է, որ յոթ հայերի նախկին մեղադրանքով դատապարտել են կախաղանի: Մինչ այդ, օսմանյան սահմանադրության համաձայն, նրանք դիմել էին Կոստանդնուպոլիս՝ «կայսերական գթասրտության համար» և ստացել «տեխնիկապես ամեն ինչ ճիշտ է, նրանց անմիջապես կախեք, իսկ խնդրագիրն ուղարկեք հետո» պատասխանը:

Դատարանը գտել էր, որ Կովկասի հայերի ռուսասիրության պատճառով իրենց մոտ հայերի վրա շատ են զայրացած. «...մի վիճակ, երբ տեղի հայերն, իհարկե, ոչ մի ձևով պատասխանատու չեն»,- գրում է հյուպատոսը և խնդրում դեսպանից անել հնարավորինը՝ վճիռը մեղմելու համար:[145]

*30 հուլիսի*

• Տրվում է Ադանայի նահանգի Սուեդիայի շրջանի հայերի տարագրելու հրահանգ, սակայն ժողովուրդը գիտեր, թե իրենց ինչ է սպասվում, և վեց՝ Բիթիաս, Վագֆ, Քեբուսիե, Խդրբեկ, Յողունօլուք և Հաջի Հաբիբլի գյուղերը դիմում են ինքնապաշտպանության՝ բարձրանալով Մուսա լեռան անառիկ բարձրունքները: Հերոսամարտը տևում է մինչև սեպտեմբերի 14-ը, երբ ֆրանսիական երկու ռազմանավեր, կառավարության որոշմամբ, շուրջ 4000 մարդու տեղափոխում են Պորտ Սայիդ: Եվ ինչպես հետագայում՝ ն-

---

* Քաղաք Վանի գավառում:

յեմբերի 8-ի իր հեռագրում նշել է Հալեպի գերմանացի հյուպատոս Ռյոսլերը. «…չկա ոչ մի ապացույց, որ այս շրջանը նախապես մտածած լինի որևէ ապստամբության մասին, ընդհակառակը, վերահաս տարագրության սպառնալիքից է, որ այն դիմել է ինքնապաշտպանության»:[146]

• Սկսվում է հայ բնակչության տարագրությունը Իզմիթի նահանգի Պարտիզակ, Օվաջըգ և Դյոնգել բնակավայրերից, որոնց հետևում են Արմաշը, Էսկիշեհիրը ու Խասկալը: Ամերիկյան դեսպանին հաջողվում է մի քանի տեղերում միայն 14 օրով հետաձգել տարագրությունը:[147]

• Հալեպի ամերիկյան հյուպատոսի տվյալներով մինչև այդ օրը Կիլիկիայի տարբեր շրջաններից Հալեպ են հասել 13155 մարդ, որոնցից 3270 հոգու ուրիշ տեղեր են տարել:[148]

• Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը հեռագրում է դեսպան Հոհենլոհեին, որ կառավարության հրահանգով նահանգի ծովափնյա մասն ու Այնթապը, Քիլիսն ու Մարաշը հայերից դատարկվել են, չնայած դրանք զինվորական կենտրոններից շատ են հեռու: Այնթապում ապրում էին 32000 հայ, իսկ Քիլիսում՝ 6000: Միաժամանակ հյուպատոսը դեսպանից խնդրում է, «…ազդու կերպով կառավարությանը խորհուրդ տալ՝ այս հրահանգը չեղյալ հայտարարելու կամ հետաձգելու»: Կատարած բոլոր փորձերն ապարդյուն են անցնում:[149]

• Հալեպի նահանգի Ֆընդըջակ և հարևան երկու ուրիշ գյուղերի 4000 բնակիչները, որ Յաշվա լեռն ստորոտում անառիկ դիրքեր էին գրավել, ստանում են անձնատուր լինելու մասին թուրքերի առաջարկը և մերժում՝ պատասխանելով. «Մենք ուզում ենք քաջաբար մեռնել, ոչ՝ ստրուկի նման»:[150]

• Ականատեսների վկայությամբ Մուշի գավառի Կորդոն գյուղում թուրքերն ու քրդերը այրում են այդտեղ հավաքված 3000 կանանց, իսկ 500 երեխաների էլ լցնում են փոսերը և կենդանի-կենդանի թաղում:[151]

*31 հուլիսի*

• Հալեպի գավառի Քեսապ քաղաքին ու Կարադուրան գյուղին տրված հնգօրյա ժամկետը լրանալուց հետո սկսվում են տարագրությունները:[152]

• Թալեաթը հրահանգում է ենթակա իշխանություններին չբավարարվել հայերի միայն տեղահանություններով, այլ նրանց հասցնել Հալեպ, որտեղից էլ ուղարկել որոշված վայրերը:[153]

• Թուրքական 8000-ի հասնող զորքերը Կալիպ բեյի հրամանատարությամբ պաշարում են Հալեպի նահանգի Մարաշի գավառի Ֆընդըջակ և հարևան երկու այլ գյուղերի հայ ինքնապաշտպանների դիրքերը Յաշվա լեռան ստորոտում և այստեղ էլ ստանում զենքը ցած դնելու մասին իրենց վերջնագրի մերժողական պատասխանը:[154]

• Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Կվյատկովսկին Տրապիզոնից արտաքին գործերի նախարար Ստ. Բուրիանին գրած հեռագրում նշում է. «Հավանաբար հայերի նկատմամբ վերաբերմունքն արդարացնելու նպատակով այստեղի վալին բազում անձանց [ներկայությամբ] հայտարարեց, որ գերմանացիները Բելգիայում 50000 մարդու են մահապատժի ենթարկել… Տարբեր աղբյուրներից ստացված տեղեկություններից պարզվել է, որ այստեղի հայերի մեծ մասը սպանվել են, մյուսները (կանայք, երեխաներ) նավերով ծովի խորքերն են տարվել և ջրասույզ արվել»:[155]

• Հալեպից գերմանական հյուպատոս Ռյոսլերը դեսպան Հոհենլոհե-

Լանգերուդգին գրում է. Միսի կաթողիկոսը Ջեմալ փաշայից թույլտվություն էր ստացել Դեր-էլ-Զոր ուղարկել հոգևորականի՝ այդեղ հասած աքսորվածների վիճակին ծանոթանալու համար: Նա այժմ վերադարձել է այնտեղից և հայտնում է հետևյալը.

«Դեր-էլ-Զոր եկածները Զեյթունի, Յարպուսի, Ալաբասկի, Ալբիստանի բնակիչներ են: Նրանց թիվը կազմում է 15398, որոնցից 10000 տեղավորվեցին քաղաքում, իսկ մյուսները՝ շրջակայքում: Նրանցից շատերը ստիպված էին մնալ բաց երկնքի տակ: 300 մարդ չհաղթահարեցին ճանապարհի դժվարությունները, 98 մարդ խեղդվեց Եփրատի ջրերում: Սնունդը բացարձակապես անբավարար է: Աքսորվածները քաղցին դիմանալու համար ստիպված էին վաճառել ավելի քան 30 երեխաների: Մեկ անձի սնունդը թեկուզև օրեկան 8 պֆենինգ* ապահովելու դեպքում, շաբաթական կպահանջվի ավելի քան 500 թուրքական ֆունտի չափով գումար:

Մինչև հուլիսի 30-ը Հալեպ ժամանեցին 14000 աքսորվածներ, որոնցից 4000-ը ուղարկվեցին ավելի հեռու, այնպես, որ նրանցից ներկայումս այստեղ են գտնվում միայն 10000 մարդ:

